

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՆԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Աստու մը հեռագիրը Լոնտոն լուր բերաւ թէ Կրեաէ իտալացիները անգլիացի զինուորներ սպաններ եւ Անգլիոյ զեր-հիւպատոսն ալ այրեր են: Հանդարտաբարոյ «Թայմզ» էն մինչեւ կրակոս «Տէյլի ֆրոնթը» բոլոր թերթերը միեւնոյն անաարբեր ցրտութեամբ խօսեցան այս գեպը. բուն վրայ, իբր թէ մեռնողները քանի մը օտարազգիներ ըլլային, աշխարհիս հեռուոր մէկ անկիւնը: Շաբաթ մը ետքը այդ միեւնոյն թերթերը խրոխտ լեզուով մը զգացընել կուտային թիւրքիոյ գէմ խիստ, կտրուկ միջոցներու զիմուծի հարկը: Այդ ժամանակամիջոցին արտաքին գործերու պաշտօնատունը գծած էր իր քաղաքականութիւնը. մամուլը կառավարական տեսութիւններուն համաձայն կ'ուզէր հանրային կարծիքը: Եւրոպական ո՛չ մէկ երկրի մամուլը արտաքին քաղաքականութեան խնդիրներու մէջ այնքան խիստ կարգապահութեան կը հետեւի որքան անգլիականը, եւ սակայն ո՛չ մէկ տեղ ալ մամուլը Անգլիայի աւելի ազատութիւն կը վայելէ: Անգլիոյ մամուլին կարգապահութիւնը ինքնաբեր է, քաղաքական զօրեղ գաստիարակութեան մը ծնունդ:

Հանրային կարծիքը, որ այս երկրին իրական իշխանութիւնն է, արտաքին քաղաքականութեան համար վրտանդ մը չէ, այլ նախարարութեան էն զօրաւոր յենարանը: Անգլիոյ հանրային միտքը կ'առաջնորդուի այնպիսի սկզբունքներէ որոնք քիչ սխալիլու երաշխաւորութիւն կ'ընծայեն: Անգլիացի միշտ իրականութիւնը կը փնտռէ: Գատուութեանը մէջ չմտորելու համար ամէն զգուշութեան կը դիմէ: Իւրաքանչիւր անգլիացի, մտաւոր զարգացումին աստիճանը ի՛նչքան ալ խոնարհ ըլլայ, միշտ քիչ շատ օժտուած է պետական մարդու մէկ քանի յատկութիւններով: Ո՛չ խանդավառիլ գիտէ, ո՛չ բռնկիլ. պաղարին ցրտութեամբ կը քննէ, կը խորհի: Յեղային արիւնը հզօրապէս կը նպաստէ այս հանդարտամտութեան որ քաղաքական կեանքի մեծագոյն առաքինութիւնն է:

Անգլիացի վստահութեամբ կը հետեւի օրապրութեան, վասն զի գիտէ թէ մամուլը լուսարանուելու բազմաթիւ միջոցներ ունի, որոնցմէ կ'օգտուի զիտակցութեամբ խորհելու եւ ժողովրդին խզմտօրէն առաջնորդելու: Օրա-

պրութիւնն ալ միեւնոյն յարգանքը ունի նախարարութեան համար որուն քաղաքականութիւնը քննադատելու կամ գրուատելու մէջ շա՛տ շրջահայեաց է: Մամուլը իր խելքովը եւ պատուանանաչութեամբը հեղինակաւոր միջնորդն է ժողովրդին եւ կառավարութեան միջեւ: Երբ ժողովուրդ եւ մամուլ միանալով յայտարարեն նախարարութեան թէ անգլիական շահերուն անհամապատասխան ընթացքը մը կը հետեւի, իշխանութիւնը կը սթափի, վասն զի գիտէ թէ թեթեւամտութեան կամ թշնամութեան գոտում գոչուած չէ որ կը լսէ:

Թիւրքիոյ մէջ մեր վիճակը այսօր, քաղաքամամբ նոյն իսկ քառուրդ դար առաջ մեր ունեցած կացութեան, անհամեմատաբար վատթարացած է: Ժողովրդի մը ինչպէս բարգաւաճումը նոյնպէս եւ քայքայումը միայն մէկ պատճառի մը հետեւանք չեն: Հանդարտ մաքով, փորձառութեան առաջնորդութեամբ, հեռզհետէ պէտք է քննել այն բոլոր պարագաները որոնք միանալով Հայ ազգը աւելի պրագազ ըրին: Մեր վերականգնումը հնարաւոր է եւ շատ յուսալի. այդ նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններէն մէկն է ինքնաքննութիւնը:

Հայոց մէջ Հանրային կարծիքը միշտ հզօրապէս ազգած է ամէն գործողներու, ամէն գործերու վրայ: Մէկէնիմէկ բռնկող, մէկէնիմէկ սմբող, քաղաքական գաստիարակութեան զուրկ, ահա ինչ որ է մեր ազգային միտքը. անգլիականին հակառակնայն: Անգլիացիները օրինակ կը ներկայացնենք, վասն զի ինչպէս անհատական կեանքի մէջ ազգատը, տկարը ապրելու համար պէտք է շատ աւելի աշխատող, շատ աւելի տոկուն ըլլան քան թէ հարուստը, քան թէ զօրեղը, նմանապէս հանրային կեանքի մէջ ալ ինկած, պզտիկ ազգերը ուժեղներէն, մեծերէն աւելի խելացի եւ պաղարին ըլլալով է որ վերածնում կրնան յուսալ: Հայոց հանրային մաքին խակութիւնը ներկայացնեմ վերջին քառուրդ դարու մեր ազգային կեանքէն քանի մը գծերով:

* * *

Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան երբ պատրիարք ընարուեցաւ, իր նախորդէն, Խրիմեան Հայրիկէն, իրեն ժառանգութիւն գտաւ Հայաստանի բարեկարգութեան խնդիրը: Երկուստարդ եպիսկոպոսը ատենապետն էր եղած Հայաստանի հարստահարութեանց քննիչ Գանձաժողովին, որուն հոգին Ստեփան փափազեան էր: Ներսէս

պատրիարք Դրան հետ վարուեցաւ զգուշաւոր, խոհեմ քաղաքականութեամբ մը որ հիմակուան բացատրութեամբ թրքաւոր պիտի կոչուէր: Ոչ-հակաթիւրք պատրիարքը 1876ին հակաթրքական համարուող ցոյց մը ըրաւ՝ Պուլկարական խնդրին առթիւ Պոլիս գումարուած զեսպանախորհրդին միջամտութիւնը խնդրելով նաեւ Հայաստանի կացութեան բարւոքումին համար ալ:

Ուշագրաւ պարագայ մըն էր որ այդ պահուն Կ. Պուսոյ հայ մամուլը ազատօրէն Հայաստանի համար ալ կը պահանջէր այն առանձնաշնորհումները որոնցմով Պուլկարիան օժտել կ'ուզուէր, պաշտպանութեամբ Ռուսիոյ: Որքան որ ալ քառօրյ դար մը առաջ թիւրքիոյ մամուլը կառավարութեան առօրեայ միջամտութիւնէն հեռու կը մնար, բարց վայելածը ազատութիւն չէր, այլ շնորհ:

Մամուլի օրէնքը 1866ին դադրած էր Կրեմէի ապրտամբութեան առթիւ. կառավարութիւնը տեղական թերթերուն շարժելու բաւական լայն միջոց կը ձգէր, բայց ուզած ատենը թերթ մը կը դադրեցնէր կամ կը ջնջէր: Ներսէս պատրիարք Պ. Փորթուզալեանի «Ասիա»ն ջնջելու տուաւ, իբր խրիմեանական. Տասեան Արթին պէյ Պարսեանի «Թատրոն»ը դադրեցուց. Խոնտարեանի «Օրագիր»ը, «Նորայիր»ը իրարու ետեւէ ջնջուեցան. ինչպէս ետքէն ալ Միտհատ փաշա, «ազատական երեսասարդ-թիւրքը», ջնջեց «Հայրենիք»ը, «Արարատ»ը, «Մեծմուս»ն, Տրապիզոնի խնդրին առթիւ: Հետաքրքրական երեւոյթ էր որ այն պահուն երբ կառավարութիւնը չէր ուզեր ո՛ր եւ է լուրջ բարեկարգութիւն մտցնել Պուլկարիոյ մէջ, հայ մամուլին կը թոյլատրուէր Հայաստանի համար ընդարձակ պահանջումներ ընել: Ներսէս պատրիարքին Դեսպանախորհրդին տուած յիշատակագիրը և հայ մամուլին պահանջումները հաւասարապէս ձեռնառու էին թրքական քաղաքականութեան, որուն պիտումները հայ ազգին մէջ կը յաղթանակէին անզգալապէս: Դուռը, իր աւանդական ուղղմայրդարութեան հաւատարիմ, կ'ուզէր կայսրութեան զանազան ցեղերը իրարու դէմ հանելով չէզոքացնել, եթէ կարելի էր, եւրոպական միջամտութիւն մը ի նպաստ Պուլկարիոյ: Պետութիւններուն արդէն զգացնել տրուած էր թէ Պուլկարիոյ համար ո՛ր եւ է առանձնաշնորհում նմանօրինակ իրաւունքներ պահանջելու առիթ պիտի հայթայթէր երկրին ուրիշ ցեղերուն ալ, ինչ որ պետութեան քայքայումը առաջ պիտի բերէր: Յոյները կրօնական հերձուածէ, եւ հելլենական շահերու վտանգումէն զրգուած՝ արդէն հակառակորդ էին Պուլկարիոյ ինքնավարութեան. Հայերուն բերանն ալ խօսք զըրուեցաւ: Թերթերը յայտարարեցին թէ՛ երբ Պուլկարեաններուն բացառիկ իրաւունքներ կը շնորհուին, Հայերն ալ օսմանեան պահուն իրենց հինգ դարու հաւատարիմ հպատակութեանը իբր վարձատրութիւն նոյն բարեկարգութիւնները կը պահանջէին: Հայոց պատրիարքն ալ, ազգային զգացումին իբր թարգման, բարեկարգութիւններու պահանջագիր մը ներկայացուց Դեսպանախորհրդին. սակայն լսրտ Սոլդակերիէն պատասխան ստացաւ թէ Դեսպա-

նախորհրդին ծրագրերը Պուլկարիոյ գործերուն միայնաւ մանափակուած է: Այդ միջոցին պատրիարքարանին հետեւած ընթացքը ոչ թէ հակաթրքական էր, այլ անուղղակի հակառակութիւն մը Ռուսիոյ պաշտանեան քաղաքականութեան դէմ: Ներսէս պատրիարք հաւանօրէն իր գիմումին արտաքին նշանակութիւնը ըմբռնած չէր: Ուկարող ալ չէր անտարբեր մնալ. հանրային կարծիքը զրգուած էր: Դեսպաններ Պոլիս գումարուին Արեւելեան խնդրին առթիւ ու մենք ձեռքերնիս ծալլած նստինք: «Չամուր մըն է պատը զարնենք, բռնեց՝ բռնեց, չի բռնեց՝ չի բռնեց» կ'ըսուէր ամէն կողմէ:

Ռուսութիւրք պատերազմը երբ կը սկսէր, յանկարծ կը ծնէր նաեւ «մէկ հայրենիք»ի գաղափարը: Սասարազամ Միտհատ փաշա բայաներու պատրիարքարանները պաշտօնական այցելութեամբ մը բուր «օսմանցիներուն» հաւատարմութիւնը կը հռչակէր: Պատերազմին սկզբնաւորութեանը Ներսէս պատրիարք շրջաբերականով մը պատուիրեց թիւրքիոյ Հայոց հաւատարմաբար եւ անձնուիրութեամբ աշակցել օսմանեան բանակներուն: Հայ ժողովուրդը, կը յարէր պատրիարքը, իր կրօնքին, իր ազգութեան, իր լեզուին անվճար պահպանումը օսմանեան պահուն պարտական է: Այս շրջաբերականին վրայ հանրային կարծիքը սաստկապէս զրգուեցաւ Ներսէս Վարձապետեանի դէմ. ու թէեւ Պոլիս պաշարումի վիճակի՝ հետեւաբար պատերազմի օրէնքի ենթարկուած, բայց և այնպէս Պոլսոյ Հայերը իբենց բերնին լեզուակապ չըլին «թրքաժող պատրիարքին» նկատմամբ: Եւրոպական մամուլին, որ հայկական խնդրով մը նոր սկսած էր զբաղել, Ներսէսի դէմ ամենախիստ յօդուածներ խրկուեցան Պուսոյ Հայերէն: Խասպեղի երիտասարդները Պրիւակի «Նո»ն մէջ որ Ռուսիոյ արտաքին գործերու պաշտօնատան բերանն էր, կը զրէին թէ Հայոց պատրիարքին նուազակն է իր ազգին դարաւոր շղթաները աւելի եւս ամբապնդել: Սուլթան Համիտ հրաւիրելով Ներսէս պատրիարքը, ձեռքով անոր կուրծքէն կախեց օսմանիւնի ականակուտ պատուանշանը եւ ըսաւ. «Թո՛ղ պատերազմը վերջանայ, ես «զիտեմ թէ իմ սիրելի եւ հաւատարիմ հայ ազգիւն ինչե՛ր պիտի ընեմ»: Պատրիարքը նոյն գիշերը Բերա իրեն եկող այցելուներուն ներկայացուց կայսերական բարեհաճութեան օսմանիւն: Հանրային կարծիքին թարգման՝ Տքթ. Ռափայկեան տխուր շեշտով մը ըսաւ. «Վա՛խ, վախ, սրբազան, ուրախանալուդ տեղ լա՛ց, լա՛ց»: Խըրմեան Հայրիկ նոյն միջոցին իր «Հայ Գոյժ»ին կամ «Վան Գոյժ»ին մէջ կը զրէր Ալաշկերտի կոտորածին առթիւ. «Ոչխարներու ոսկորներէն մանեակ շինեցին ու հովիւն վզէն կախեցին»: Ակնարկութիւն օսմանիւնի ականակուտին:

Եւ սակայն այդ Հանրային կարծիքը չէր ըսեր թէ երբ Հայաստանը իսլամ բանակներուն ձեռքն էր, ու պատերազմի մը ելքն ալ միշտ անորոշ, ի՛նչ կը մնար ընել

Հայոց պատրիարքին, գտնէ բիշ մը ապահովելու համար իր անպաշտպան ժողովրդին կեանքը: Կատարեցնելով երկրին իշխանութիւնը, անոր պահանջումներուն ընդդիմապրութեամբ, զրգոնելով մահմէտական մոլեռանդութիւնը, Ներսէս պատրիարք պիտի կրնար աւելի օգտակար ըլլալ անգոր, լքեալ, խեղճ ժողովրդի մը: Հանրային կարծիքը, Պոլիս մանաւանդ, այսքան բարակները չէր փնտրեր:

* * *

Ռուսական բանակը երբ Սան-Սթեֆանո հասաւ Ներսէս պատրիարք Նիքոլա մեծ-գուբսին դիմելով ձարին պաշտպանութիւնը խնդրեց հայ ազգին համար: Դարաւոր քաղաքականութիւն մը այդ օրը քանդուեցաւ: Անտարակայ Ներսէս պատրիարք չէր կարող շարունակել իր թըրքասեր քաղաքականութիւնը. կացութիւնը փոխուած էր ու հանրային կարծիքը զրգոնուած: Տարբական խոհեմութիւնը սակայն կը պահանջէր Ներսէսի հրամարումը, և ընտրութիւնը տեղապահի մը, որ կարենար անցնելով կաշկանդութիւններէն ազատ գործել: Ռուսիոյ մեր դիմումէն անյաջողութիւն ալ կարելի էր սպասել, ու օր մը Հայն ու թիւրքը կրնային նսրէն միս մինակ իրարու հետ մնալ. ան ատեն Շրջաբերականին պատրիարքը վերադարձնելով իր աթոռը, սուլթանին վստահելի հեղինակաւոր միջնորդ մը կ'անենայինք թիւրքերուն հետ մեր յարաբերութեանց մէջ: Նահանջելու պատահականութիւնը երբեք մեր հաշիւներուն մէջ չենք մտցնիր:

Յայտնի չէ թէ 16րդ յօդուածին գործադրութիւնը ինչ հետեւանքներու պիտի յանդէր մեզի համար. բայց կարելի է ընդունիլ թէ Հայաստան բիշ մը հանդիստ շունչ պիտի կրնար առնել, եւ հաւանօրէն Հերսէ-Պոսնիոյ բազմակից մը պիտի դանար Ռուսիոյ ձեռքը: Ներսէս պատրիարք այդ յօդուածին շնորհիւ ժողովրդական եղաւ. հանրային կարծիքը իր հետն էր:

Երբ որոշուեցաւ Պերլին վեհաժողով մը գումարել, Ներսէս պատրիարք ուղեց աւելի բան մը ձեռք բերել. Հանրային կարծիքը Հայաստանի թաղաւորութիւն կը պահանջէր: Միեւնոյն պատրիարքը որ 1876ին աւստրական քաղաքականութեան դէմ թրքական պզտիկ գործիք մը եղած էր՝ անգիտակցաբար, որ պատերազմին սիզմաւորութեանը հակառու հանդիսացած էր, որ՝ պատերազմէն ետքը՝ հակաթուրք եւ ուստասէր եղած էր, հիմա նորէն միեւնոյն պատրիարքը Ռուսիոյ շահերը հարուածող ներուն եւ թիւրքիան պաշտպանողներուն գործիքներէն մէկը պիտի ըլլար:

Խորէն Նար-Պէյ եւ Խրիմեան Հայրիկ իբր պատգամաւոր վեհաժողովին գացին, եւ ետքն ալ Ստեփան Փափագեան իբր հեղինակաւոր խորհրդական անոնց քով խրկուեցաւ: Դուրը այս առաջումներուն դէմ բնաւ արգելք չհանեց, մանաւանդ որ պատրիարքին ու պատգամաւորներուն միջեւ ծածկագիր հեռագիրներու փոխանակութիւնը թոյլատրեց: Կառավարութիւնը իր բարեացակամութեան մէջ այնքան առաջ գնաց որ հրամայեց Արտաքին

գործերու պաշտօնատան ծածկագիր հեռագիրներու անօրէնին, որ հայ մըն էր, Հայոց պատրիարքարանին համար մասնաւոր ծածկագրութիւն մը պատրաստել: Ու երբեք կառավարութիւնը Պերլին եւ Գում-Գարու փոխանակուած հեռագիրները քակել չտուաւ և չկարգաց: Ինչ հարկ: Դուրը իր ըրածը մենէ աղէկ գիտէր. Սան-Սթեֆանոյի 16րդ յօդուածը իրականութիւն մըն էր որուն ջնջումը պէտք էր դիւրացնել նոյն խակ Հայոց միջոցաւ, անիրականալի երազներու պահանջումով: Բայց բիշ մնաց Դրան հաշիւները պիտի քանդուէին Նուպար փաշայի շնորհիւ: Հայ քաղաքագէտը վեհաժողովին անգաֆներուն ներկայացուց Հայաստանի բարեկարգութեանց ծրագիր մը, որուն ընդունելութիւնը ապահովեալ էր, եւ որուն գործադրութիւնը Հայաստանի համար ամենամեծ բարիք մը պիտի ըլլար: Դուրը պատրիարքարանին միջոցաւ ջնջեց այդ խորհուրդը: Նուպար փաշա երբեք չմիտնարուեցաւ հայ ազգին այս կորստին համար. բայց կրնանք ենթադրել թէ հայ ազգն ալ երբեք պիտի չմիտնարուէր եթէ Նուպար փաշայի խորհուրդները իրականութեան վերածուէին: «Ախ, Պերլինէն Հայոց թաշաւորութիւն պիտի առնէինք, բայց ան Նուպարը թող չտուաւ» պիտի ըսուէր սերունդէ սերունդ: Պերլին Սան-Սթեֆանոյի յօդուածն ալ վրայ տուէինք, եւ բոլորովին բացը մնացինք: Հայոց վիճակը աւելի սկսաւ վատթարանալ: Ներսէս պատրիարք ջանաց յարափոփսի քաղաքականութեամբ շարիքը դարմանել, բայց դէմը իրմէն աւելի վարպետ կար, սուլթան Համիտ, որ Շրջաբերականը ուրացող Սան-Սթեֆանոյի և Պերլինի պատրիարքին հրամարականը չընդունեց, եւ միանգամայն անոր ասպարէզը պսակեց արքայական նուիրատուութեամբ. բայց հանրային կարծիքը գոհ էր եւ խանդավառ:

* * *

Պերլինի վեհաժողովէն ետքը Խրիմեան Հայրիկ երբ վան կը դանուէր, կուսակալ Հառան փաշային շնորհակալութեան թուղթ մը ստորագրեց, անոր բարուք վարչութեանը իբր վկայութիւն: Ներսէս պատրիարք այդ վկայարդին իմաստը հրատարակել սուաւ «Մասիս»-ի մէջ՝ «ոչխարներու ոսկորներէն մանեակ»-ին հաշիւը կարգադրելու համար, եւ միանգամայն կաթողիկոսական մրցակցի մը ժողովրդականութիւնը բեկանելու նպատակաւ: Պատրիարքը սակայն հաշիւներուն մէջ կը սխալէր: Հանրային կարծիքը հանգարտ մնաց, եւ «Մասիս» չկրցաւ Հայրիկի դէմ զայրոյթի հոսանք մը ստեղծել: Խրիմեանի նման հեղինակութիւն մը վասպուրականի շահերը դիտէր, ուստի եւ կուսակալին նկատմամբ հետեւած բարեկամական քաղաքականութիւնը միայն եւ միմիայն այդ նահանգին գերագոյն օգտին համար կրնար ըլլալ: Քիչ անգամ պատահած է որ մեր մէջ հանրային կարծիքը այսքան իմաստուն, հեռատես գտնուած ըլլայ:

* * *

Իզմիրլեան պատրիարքին պաշտօնավարութեան վրայ խօսուած ատեն զգուշաւոր ըլլալու հարկը զգալի է: Այդ ժամանակամիջոցը տակաւին պատմութեան գլուխ մը չէ. կը շարունակուի զանազան երեւոյթներու տակ: Պէտք է ընդունինք սակայն թէ պատրիարքը ամէն ատեն իր գործելու կատարեալ ազատութիւնը չվայելեց. հանրային կարծիքին զօրեղ ու միաբան ճնշումին ներքեւ էր:

* * *

Սեպտեմբեր 18 30ի Գրան դիմումը հանրային կարծիքի մը պահանջումն էր ու անոնք որ կը կարծեն թէ քաղաքական սխալ մը եղաւ այդ հանդիսաւոր խաղաղասիրական ցոյցը, տարակոյս չի կայ որ, եթէ 1895ին Պոլիս անշարժութեան մէջ մնար, այսօր պիտի ըսէին. «Ինչ յիմարութիւն, ինչ դաւաճանութիւն. նաւատորմիչները Պէշիքա շողի տակ կը սպասեն, երեք պետութիւն հայկական դատին պաշտպան, արի պատրիարք մը եւ ժողովրդական վարչութիւն մը կը նախագահեն ազգային գործերուն, ու Պոլսոյ հայութիւնը կը սպասէր որ ամէն բան պատրաստ գտնէ ու վայելէ. շարեւէ մը Պոլիս եւ ահա կացութիւնը բոլորովին կը փոխուէր. կա՛մ սուլթանը տեղի կուտար կա՛մ նաւատորմիչները ներս կը մըտնէին:»

* * *

Մեր մօտաւոր անցեալէն այս մէկ բանի դժերը ներկայացնելով նպատակ ունիմ յիշեցնել որ արդի կացութեանը համար հայ ազգը ասոր անոր օձիքէն բռնել ու զած ատեն կը մտնայ այն տարբական ճշմարտութիւնը թէ ամէն ազգի մէջ հանրային կարծիքը վճռական ազդեցութիւն ունի ժողովրդին կեանքին վրայ: Օսմանեան իշխանութեան հակահայկական քաղաքականութեան դէմ ազգային մաքառումնիս Ներսէս պատրիարքէն սկսեալ մինչեւ մեր ատենները եթէ ոչ իր բոլոր մանրամասնութիւններուն, բայց գէթ ամբողջութեանը մէջ հանրային կարծիքին թելադրութիւնն է: Ո՛ր եւ է դաւազութիւն, ո՛ր եւ է յիմարական ձեռնարկ չի կրնար քիչ շատ յաջողութեամբ գործադրուիլ եթէ հանրային կարծիքը արթուն մնայ: Օրինակի համար՝ այն օրէն երբ հայ ժողովուրդը ուժգնապէս կատղեցաւ ոմբաձգութեան փորձերու դէմ, ո՛չ ոք այլ եւս կը համարձակի կրկնել ձեռնարկներ, պաշտպանել գաղափարներ որոնք հայկական դատին մահաբեր հարուած կրնան տալ: Թրքական իշխանութիւնը ինքնիրեն անկարող էր ոմբաձգութիւնը արգելել:

Հիմա ամենքս ալ կը զգանք թէ հայ ազգը ամենագիտար կացութեան մէջ է. միշտ հանրային կարծիքն է որ պիտի պատրաստէ ապագան. որքան կարելի է քիչ սխալելու է՛ն ապահով երաշխաւորութիւնը պէտք է փրնտով անգլիական մտքին հետեւողութեան մէջ: Պաղարիւն ցրտութեամբ իրականութիւնը փնտռել. ո՛չ մէկէն ի մէկ բռնկիլ, ո՛չ մէկէն ի մէկ սմբիլ:

ԱՐՓԻՈՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ Կ՝ՊՈԼԻՍ

Գերմանիոյ կայսրը կը պատրաստուի երկրորդ անգամ այցելել Թիւրքիա, վերջնական կերպով ամրապնդելու համար իր արեւելեան քաղաքականութիւնը որուն հիմերը դրաւ իր առաջին այցելութեանը, 1889ին: Այս տասը տարուան շրջանին մէջ, Գերմանիա Թիւրքիոյ մէջ լուր հանդիսատեսի դերէն այսօր բարձրացած է գլխաւոր եւ՝ կարելի է ըսել՝ այլամերձ գերակատարի դիրքին: Տնտեսապէս եւ քաղաքականապէս — մին միւսին հետեւելով անհրաժեշտաբար — այսօր Գերմանիա բացառիկ դիրք մը ունի Թիւրքիոյ մէջ, ուժեղ բարեկամի եւ խորհրդականի դիրքը՝ որուն սուլթանը կ'անսոյ շերմեանագործն:

Կարելի չէ ստուգօրէն ըսել թէ մօտաւոր ապագային մէջ դեռ ինչե՛ր վերապահուած են տեսնել մեզ՝ Գերմանիոյ արեւելեան յառաջխաղացութեան ճամբուն վրայ, բայց ակնհերեւ է թէ Վիլհելմ կայսրը իր շահած գափնիներուն վրայ քնացող մարդու կերպեր չունի: Լուրը թէ Անգլիոյ հետ համաձայնած է՝ Թիւրքիոյ մէջ ազատ ասպարէզ ունենալու համար, ենթադրել կուտայ Գերմանիոյ կողմէ աւելի ազդեցիկ եւ աւելի տիրապետող քաղաքականութեան մը հետապատկերը Վոսիփրի տփերէն մինչեւ Միջագետք:

Առիթ ունեցանք բանի անգամ շեշտելու այն կենսական կարեւորութիւնը զոր այդ քաղաքականութեան յաջողութիւնը ունի մեզի՝ Հայերու՝ համար: Բարեկարգ Թիւրքիա մը ուր Գերմանացիները և անոնց քով տեղացիները կարենան ապրիլ ու բարգաւաճիլ, մեր էն սրտագին բաղձանքներուն մաս կը կազմէ: Ուստի հասկնալի է թէ ո՛րքան սրտեռանդ ուշադրութեամբ պէտք ենք հետեւիլ այդ քաղաքականութեան իւրաքանչիւր հանգրուաններուն:

Ասոր համար է որ «Նոր կեանք»ի ներկայ թիւէն մեր ընթերցողներուն կը սկսինք ներկայացնել «Ռըվիւ տը Բարի»ի մէջ երեւցած շատ հմտալից եւ շատ արժէքաւոր ուսումնասիրութիւն մը, որուն մէջ ցոյց տըրուած են Գերմանիոյ առած քայլերը Թիւրքիոյ մէջ, սկիզբէն մինչեւ այսօր: Ուսումնասիրութեան հեղինակն է «Թան»ի Կ. Պոլսոյ թղթակից Պ. Ժորժ Կոլիս, շատ կարող հրապարակագրի մը հետ՝ շատ ազնիւ մարդ մը, որ սկիզբէն ի վեր մեր դատին ամէնէն ջերմ համակիրներէն մին եղած է:

Ա

Մինչեւ 1870, Բրուսիա Կ. Պոլսոյ մէջ շատ չնչին դեր մը խաղաց: Ռուսիոյ եւ Աւստրիոյ միջեւ տատանելով, առանց բնաւ որոշ դիրք մը բռնելու, փոխն ի փոխ Ռուսիոյ կամ Աւստրիոյ ի սպաս կը գնէր իր պզտիկ ազ-

գեցութիւնը: Երբոր, զիպուածաւ, համարուիեան զրօշակ մը կը նշմարուէր Արշիպեղազոսի կամ Մարմարայի մէջ, ամէն մարդ ծովեզերք կը վազէր այդ նորանշան բանը տեսնելու: Գերմաներէնը անծանօթ լեզու մըն էր Արեւելքի նաւահանգիստներուն մէջ:

1870էն զեռ շատ ետքն ալ, Պիզմարք իշխանը որ ատենօք ան հոչակաւոր խօսքը ըսած էր՝ «Կ. Պոլսէն եկած սուրհանգակը չե՛մ բանար անգամ», կը կրկնէր տակաւէն թէ այդ ամէնը մէկ բովանդակացի զինուորի ոսկորները շարժեր: 1873ին Կ. Պոլսոյ գերմանական նուիրակութիւնը զեռսպանութեան փոխուեցաւ անշշուկ, ու իբր զեռսպան զրկուեցաւ քաղցրաբարոյ Վերթեր պատնիք որ մեծ ձեռնարկները չէր սիրեր եւ ազմուէկ կը խորշէր:

Նոյն իսկ երբոր Պերլինի դաշնագիրը երեք կայսրերուն (Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ) համաձայնութիւնը խզեց եւ Գերմանիա ազատութիւն ձեռք բերաւ զէպի Արեւելք քաշելու իր միմիակ դաշնակցին՝ Աւստրիոյ ետեւէն, ձերունի Վիլհելմ կայսրը զգուշացաւ իր Ռուսիոյ ազգականին իրաւասութեան սահմաններուն մէջ ոտնձգութիւններ ընելէ: Պիզմարք իշխանն ալ շատ ակորժ ունեցած ըլլալ չի թուիր այդպիսի արկածներու համար, ո՛չ ալ մանաւանդ թուրքասեր քաղաքականութեան մը համար: Թիւրքին իմաստութեանը ո՛ր եւ է մտտահալութիւն չունէր, ո՛չ ալ յոյս ունէր անոր վերականգնուած տեսնելու: Պերլինի վեհաժողովէն ետքը, ստորագրութեանց փոխանակման օրը, իր տունը կանչել տուաւ օսմանեան լիազօրնեւորը եւ ըսաւ. «Է՛յ հիմակ, պարոններ, զո՛հ ըլլալու էք, ձեզի քսան տարուան համար լաւ խաղաղութիւն մը ապահովեցինք: Այդ միջոցին, կրնաք բարենորոգութեան ի գործ գնել, երկիրը յառաջդիմութեան առջեւ բանալ եւ մաքրել անոր վարչութիւնը: Թիւրքիոյ փրկութեան վերջին հաւանականութիւնն է ասիկա թերեւ: Բայց ապահով եմ որ ասոնցմէ ո՛չ մէկը պիտի ընէք:» Դեռ շատ ետքն ալ, 1886ին, երբ Գերմանիա արզէն քաղաքային ու զինուորական պաշտօնակալներ ունէր Կ. Պոլիս, Պիզմարք խորհրդարանին մէջ կ'ըսէր. «Եթէ տագնապ մը պայթի արեւելքի մէջ, պիտի սպասենք՝ մեր բռնելիք բնութեանը որոշելէ առաջ՝ որ աւելի շահ ունեցող պետութիւնն երբ որոշեն իրենց զիրքը:» 1889ին, զիմադրած էր Վիլհելմ Բ. ի այցելութեանը:

Եւ սակայն, ամէն բան Գերմանիան զէպի Թուրքիա քաշել կը թուէր: Աւստրիա կը հրաւիրէր զանի սուլթանին մօտ, զոր կողմուտած էր (Պատնա-Ջէրսէք) ետուն խոնարհ ծառան զարձած էր: Գերմանական ապրանքները անյուսալի կերպով կը յաջողէին Արեւելքի մէջ: Վաճառականութիւնը ինքզինքին զիրք մը շինած էր զիւանագիտութեան առաջ եւ ասոր աջակցութիւնը կը խնդրէր՝ պաշտպանելու համար իր նոր շահերը: Պուլկարիա Ռուսիոյ հետ կը գծուէր եւ կեդրոնական Եւրոպայի առջեւ կը բանար Դանուբի եւ Մարիձայի առեւտրական մեծ ճամբաները զէպի Կ. Պոլիս: Պերլինի դաշնագրին մէջ անտես ըրած չէին Սերպերուն աջակցութիւնը ապահովել՝ Մա-

կեդոնիոյ ճամբան բանալու համար զէպի Սէլանիկ: Ամէն բան կը հրաւիրէր Գերմանիան աւելի մօտէն հետեւելու օսմանեան գործերուն՝ զորոնք հին հսկողները քիչ մը անտեսել կը թուէին կամ ա՛լ չէին կրնար վարել ուղտուն պէս: Ռուսիա սիրալիր ու մտադին քաղաքականութեան մը կը հետեւէր Կ. Պոլսոյ մէջ, բայց առանց տեւական ըլլալու հաւանականութեան, որովհետեւ թէպէտ ձարը Եւրոպայի մէջ միակ վեհապետն է որ սուլթանին հաճոյ ըլլալու պէտք չունի եւ անոր վախ ազդելով կրնայ շատանալ, միւս կողմէ ո՛չ մէկ ատեն կրնայ ճշմարիտ վստահութիւն մը ներշնչել անոր: Ֆրանսա ուրիշ մտածութիւններ ունէր զլիսուն մէջ, եւ Անգլիա կասկածելի դարձած էր Կիպրոսի դաշնագրէն եւ յայտնապէս թըրքատեաց ազատական նախարարութեան մը գալուստէն ի վեր:

Հետեւաբար տե՛ղ մը կար զրաւելիք իրեն յարակից ամէն առաւելութիւններովը: Պետութիւն մը միայն, որուն սահմանները օսմանեան կայսրութեան չեն հպիր, կրնար բարեկամը ըլլալ, անհրաժեշտ բարեկամը, պատրաստ՝ եւրոպական շահերը զոհելու ի նպաստ թուրք շահերուն սրոնք իր սեփական շահերուն խառնուած ըլլալին: Բայց, ներկայացած առաւելութիւններէն օգտուելու համար, ի փոխարէն պէտք էր մինչեւ մեղաւիցութեան հասնող հաճոյակատարութիւն մը:

Թուրքասեր քաղաքականութեան հիմնադիրը եղաւ Կ. Պոլսոյ գերմանական զեռսպան Պ. Ֆրոն Հացֆէլտ: Իր նախորդը, Ռէյօս իշխանը, ճշմարիտ ազնուական, իր պերճութեամբը շլացուցած էր Պալատը, Դուռը եւ քաղաքը, եւ ժողովրդին մէջ շատ բարձր գաղափար մը տարածած էր իր տիրոջ կայսեր նկատմամբ, սրու մասին մինչեւ այն ատեն շատ բան չէր զիտցուեր, բացի միայն սըկիք թէ Չարին ազգականն էր եւ պէտք եղածին չափ նաւ չունէր մինչեւ Վուսիօր զրկելու համար: Հացֆէլտ կոմսը Կ. Պոլիս հասաւ 1880ի սկիզբը: Անմիջապէս, շատ որոշ սկիտեսաւ այն գերը զոր իր կատարութիւնը եւ գերման ազգը կրնային խաղալ Թիւրքիոյ եւ մանաւանդ սուլթանին մօտ: Յայնմհետէ, ա՛լ անդադար կրկնեց. «Արեւելքի բոլոր ճամբաները մեր առջեւ բաց են: Գերմանիա Թիւրքիոյ բարեկամը պիտի ըլլայ: Եւրոպայի մէջ պիտի պահպանէ թուրքերուն ուժին, սուլթանին զօրութեան գաղափարը: Եթէ իրօք այդ փառքերը անցած դացած են, Գերմանիա կըրցածին չափ պիտի վերակենդանացնէ զանոնք: Ի հարկին, անոնց պատրանքը տեւել պիտի տայ:» Ու այս զրութեան զործարարութեանը սկիսաւ Կ. Պոլիս՝ զայն վերջնապէս Պերլինի ընդունել տալէ առաջ:

Սուլթանը անոր բաղձանքներուն ընդ առաջ զրնաց՝ զիտարութիւն յայտնելով Գերմանացիներուն տեղ մը ապուր իր խորհրդականներուն շարքին մէջ: Ասով իր սովորական քաղաքականութիւնը կը շարունակէր, — որովհետեւ, իր տիրապետութեան միջոցին որ երկար հակազգեցութիւն մը եղաւ իր նախորդներուն բարենորոգութեանը զէմ, միշտ վարպետութիւնը ունեցաւ

Երուզայի զիմելու՝ իրր թէ վերակազմելու համար վարչութիւնները զոր ինք ձեռքի տակէ կը քանդէր կամ կ'անբարոյացնէր լրտեսութեամբ, քսութեամբ, վճարումներուն անկանոնութեամբ և անձնական իշխանութեան ոտնձգութիւններով: Յաջորդաբար կամ միանգամայն, բոլոր պետութիւններէն կը խնդրէր կարող մարդիկ որոնք կուզային մաշիլ նախարարութեանց եւ բանակին մէջ, առանց կարենալու հոն գտնել պէտք եղած վստահութիւնը եւ աշխատակցութիւնը: Ան ատեն մտադրութիւն ունէր վերակազմելու ֆրանսական զինուորական հին պատուիրակութիւնը որ 1870ին լուծուած էր, եւ քաղաքային պաշտօնատարներ խնդրելու Գերմանիայէն: Պ. Ֆոն Հագֆէլտ զործը չձգձղեց: 1880 օգոստոս 15ին Պ. Ֆոն Վէթէնտորֆ մը ելմտական նախարարութեան մէջ կը մտնէր առջի բերան 25,000 զրուշ ամսականով եւ խորհրդականի պաշտօնով: Եոյն տարւոյն վերջը, Պ. Կէշէր մը, իրաւաբանութեան սոցթոր, արտաքին գործերու նախարարութեան մէջ կը մտնէր իբր օրէնսդէտ-խորհրդական, և Պ. Պէրթրամ մը՝ մաքսային վերատեսչութեան մէջ: 1882 յունիսին կը հասնէր մասնագէտ մը Պանարմայի կայսերական ազարակներուն համար, եւ սեպտեմբերին երկու նոր գերման միւսթէշարներ կը տեղաւորուէին հանրօգուտ շինութեանց եւ առևտրական պաշտօնատան մէջ:

Պ. Ֆոն Վէթէնտորֆ ելմտական ղեղեցիկ ասպարէզ մը ունէր ետին: Երբ դարձաւ Վէթէնտորֆ պէյ եղաւ՝ անկարող գտնուեցաւ ու և է բան մը ընելու թիւրքիոյ ներքին վարչութեան մէջ: Վերակազմութեան ղեղեցիկ յատակաձեւներու եւ նոյն իսկ ելմտացոյցներու աշխատեցաւ: Բայց ո՛րք են Վէթէնտորֆ պէյի ելմտացոյցները, ո՛րք են յատակաձեւները: Երեք տարին լրանալուն՝ պայմանագրութիւնը չվերանորոգեց: Պէրթրամ Էֆէնտի աւելի բաղդաւոր բըրպաւ: Մէկ քանի ծառայութիւն մատուց մաքսային վերատեսչութեան, առանց յաջողելու սակայն ճշմարտանման վիճակացոյցներ եւ կանոնաւոր սակագներ հաստատելու զորոնք խոստացած էր առևտրական աշխարհին: Վերջի վերջոյ ան ալ ձանձրանալով, անցեալ տարի մերժեց ելմտական նախարարութեան մէջ շատ գեղեցիկ պաշտօն մը: Կէշէր Էֆէնտի, 1893ին, հիւպատոսական ասպարէզը մտաւ: Միւսները կամաց կամաց անհետ եղած էին:

Անոնց անդ ուրիշներ բերուեցան: Գերմանիա բարձրաստիճան պաշտօնեաներ կը մատակարարէ անընդհատ օսմանեան բարձր վարչութեան. ի բաց առեալ երկու Ֆրանսացի ոստիկանութեան մէջ եւ մէկ քանի Անգլիացի նաւարանին մէջ, մրցակից չունի հոն: Միայն թէ գերման պաշտօնատարները ա՛լ առջի ոգեւորութիւնը չունին:

Այդ պատուիրակներուն վհատութիւնը արգարանալի է: Արդ իրական արժանիքի տէր մարդիկը, տեսնելով հարստութեանց փճացումը եւ ուժերու կորուստը, ի զօր փորձեցին՝ իրենց ցեղին մէթոտիք ոգիսլը՝ մէկ քանի անհրաժեշտ բարենորոգումներ հաստատել. բայց թիւրքիոյ մէջ վարչութեան յատկանիշն է ճշդիւ ու եւ մէթոտի, ու և է կարգ-կանոնի ու խնայողութեան սկզբունքի բացա-

կայութիւնը: Թուրք պաշտօնատան մը մէջ լաւ խորհրդական մը այնչափ անտեղի է որչափ հաշուետու մը՝ «փերուշան» յի մը ձեռքը: Օրական գործին համար, Արիւմուտքի մը գրեթէ աւելորդ է, բացի եթէ արեւելեան ուժով խմոր մը ունենայ մէջը. քիչ ատենէն կը պաշարուի կը խզուի սովորութիւններէ որոնք իր սովորութիւններէն շատ հեռու են, եւ սակայն իրենց նշանակութիւնը ունին տեղական մտքին եւ աւանդութեան մէջ. չի կրնար իսկ այսպէն զործեր որոնք անբարոյական կը թուին իրեն: Կը զարմացնէ թուրքերը, առանց հատցնելու անոնց հրաշալի համբերութիւնը: Չինքը ձանձրալի կը գտնեն, բայց կը հանդուրժեն իր ներկայութեանը. ամէն բան կը պակսի իրեն, նոյն իսկ հակաճառութիւնը որ իրեն ուժ պիտի տար: Ան ատեն, շա՛տ յոգնած, չկրնալով ինքզինքը պաշտօնանկ ընել տալ, կը ձգէ կ'երթայ: Միացողները ուրիշ հաշիւ չունին բայց եթէ ու թէ այստեղ ամսականները տասն անգամ աւելի բարձր են քան ինչ որ կրնային երազել Գերմանիոյ մէջ: Իրենց փառասիրութիւնը՝ ապագային իրենց հայրենի պատիկ բաղբին մէջ քաշուելու միջակ զաղափարէն անգին չանցնիր: Պղտիկ պաշտօնեաներու հոգին ունին, ոչ թէ վեցազններու. կարգապահութեան մարդիկ են, եւ ոչ թէ վերանորոգիչներ: Քաղաքային վարչութեան մէջ Գերմանիա մեծ ազդեցութիւն չունեցաւ ուրեմն. բայց բանակին կողմը լաւալոյն ասպարէզ մը գտած էր:



1883ին է որ գերմանական զինուորական պատուիրակութիւնը Պոլիս հասաւ: Իր առաջին պիսը եղաւ զօրավար Ֆոն Քէօլեր, որ երեք տարի ետքը մեռաւ պաշտօնին զուլիւր: Արի ու լաւ սպայ մըն էր ինքը, Գերմանիոյ մէջ շատ ցնահատուած: Տաղանդ միայն ցոյց տուաւ իր գործին մէջ, եւ ասիկա բաւական չէր բանակ մը կազմելու՝ ցեղի մը ցանուցի զինուորական բնագոյնը լրիւ միայն: Գրեթէ հանձար պէտք էր այդ գործին համար: Ամբողջ շէնքը, իր թերութիւններով եւ իր շատ մեծ արժանիքներով, արդիւնքն է Ֆոն տէր Կոլց զօրավարին, որ այսօր զօրաբաժնի մը հրամանատարն է Ֆրանքֆորտ-զուր-Օտեր: Իր օսմանեան ասպարէզը տասներկու տարի տեւեց: 1883ին եկած ատենը կիսաբաժնի զօրավարի աստիճան ունէր եւ զինուորական վարժարաններու քննիչի պաշտօն. զօրավար ֆոն Քէօլերի մահուանը՝ պատուիրակութեան պետը եղաւ, յետոյ զօրաբաժնի հրամանատար, սպայակոյտի պետի օգնական եւ վերջապէս մարշալտ:

Ամէն տեսակետով, Ֆոն տէր Կոլց իրօք գործին մարդն էր: Գերմանական մեծ սպայակոյտէն ելած, զինուորական ակադեմիային մէջ պատմութեան նստիկն ուսուցիչ, առաջնակարգ մատենագիր, հեղինակ հոգաւոր «Ամբողջ ազգը զինուոր» գրքին, ու այնչափ լիցուն հայրենասիրական խտէալով որչափ զինուորական գիտութեամբ, պէտք եղած խանդավառութիւնը ունէր՝ երիտասարդ ըս-

պաներու եռանդուն սերունդ մը հասցնելու համար, եւ պէտք եղած փորձառութիւնը՝ սքանչելի խորհուրդներ տալու համար: Շատ պարզ, բարեմիտ, հեզ եւ մանաւանդ յամառ, ամէնուն համակրանքը շահեցաւ եւ ամէն ընդդիմութիւններու դէմ անպարտելի հեղահագութիւն մը մէջ տեղ գրաւ: Բերայի փոստըներէն կը սիրէր անցնիլ երթալ, զլուխը ճորճորալով եւ վերարկուն ծփին, հաստկեկ վարձապետի մը կերպերով: Բայց իր մաքին գերազանցութիւնը, իր նկարագրին շիտակութիւնը եւ իր մեծ քաղցրաբարոյութիւնը՝ սքանչացողներ ու հաւատարիմ աշկերտներ կը ծնուցանէին, այն արեւելեան քիչ մը ստրկամիտ հաւատարմութեամբ որ ամէնէն անգգաները անգամ կը զըզուէ:

Ասլթանը շատ չանցած իրաչեցաւ այդ կազմակերպութեան հանձնարէն որ սղիղ կը կանգնէր ընդհանուր կազմալուծութեան մէջտեղ: Կսկծելով կը զգար թէ իր զահուն սուքը նոր հեղինակութիւն մը կը բարձրանար, զիսութեան, կարգ կանոնի եւ ուղղադատութեան հեղինակութիւնը: Ուստի Ֆոն տէր Կոլց փաշայի անխոնջ գործունէութիւնը անընդհատ արգելքի հանդիպեցաւ: Լրտեսութիւնը անոր չորս բոլորաթիւք առած էր. ուղղադատական կամ տեղադրական նպատակով ճամբորդութեան մը սկսելուն պէս, հեռագրով զինքը Պալատ կը կանչէին ու եւ պատրուակով. արդի բանակներուն կարգապահութեան սարքական սկզբունքներէն մին ի գործ դնել փորձած ատենը, ծածկաբար խոչընդոտներ կը հանէին զիմացը: Զինքը զօրքէն հեռու կը պահէին. թէեւ բանակին սպայակոյտի պետին օգնական, բնաւ իշխանութիւն չունեցաւ քան ընդ որս ժամուան պատիմ մը առլու զինուորի մը: Վերջին ասորիները սուլթանը հանդիսութեամբ չունէր զինքը, չուզելով հանդերձ որ մեկնի, ու, զինքը սիրալիր վարժունքով սղողելով մէկտեղ, կը մերժէր առաջ քաշել անոր առաջարկած սպաները. ընդհակառակը, ապկարներ իր խի ունեցած աստիճանը կը ստանային: Սաղրանքը կը պատարէր ֆոն տէր Կոլցի շուրջը, առանց ինք կարեւորութիւն տալու. երբ, զիպուածով, իրեն կը զպչէր, իր զազոյթը սոսկալի էր: Օր մը, իր սպայակոյտի աշակերտներովը, Երլաղը բէօշին վրայ նայող բլուրները ուսումնասիրած էր: Իրիկունը սուլթանը զինքը մեղադրեց՝ սպաներու սորվեցուցած ըլլալուն համար իր բնակարանը յարձակմամբ առնելու միջոցը: Այս խօսքին վրայ զօրաւարը, ա՛լ ինքզինքը չընկնելով, պատասխանեց թէ չի պիտի մնար սպայակոյտի մը զլուխը որուն մէկ սպան իր պետին լըրտեսը դռնալու չափ «սրիկայ» էր: Յետոյ զուրս ելաւ: Շատ զժուարութեամբ կրցին հրաժարականը ետ առնել տալ իրեն. կանխաւ պահանջեց որ մասնիչ սպան պաշտօնանկ ու աստիճանազուրկ ըլլայ:

Ֆոն տէր Կոլց յաջողեցաւ գործադրութեան գնել իր վերակազմութեան յատակագծին ընդհանուր գծերը: Թիւրքերը իրեն կը պարտին զինուորագրութեան օրէնքները, նոր զինուորներուն ճշգրտման բարեօրումը, զինուորական շրջանակներու օգտակար բարեփոխում մը, օժանդակ սպասարկութիւններու կազմակերպութեան սկզբնա-

ւորութիւն մը եւ պատերազմի ասեն բանակին պէտք եղած անասուններուն հաւաքման եւ փոխադրութեան միջոցներուն մասին օրէնք մը: Բայց ինչ որ իրեն անկորնչելի իրաւունքներ կուտայ օսմանեան բանակին երախտադրութեան վրայ, սա է որ զանի օժանդակ բանակը շարժման մէջ գնելու յատակագծով մը եւ ընդհանուր սպայակոյտով մը: Սպայակոյտի սղի մը ստեղծեց, որ մինչեւ ան ատեն անձանօթ էր թիւրքերուն, արհեստին սէրը եւ պարտականութեան զգացումը ներշնչելով ափ մը երկտասարգներու, որոնց մէջ, ալ աւելի, հայրենասիրութեան ամէնէն ազնիւ խանդերը արթնցուց: Իր աշակերտներէն մին էր Սէյֆուլլահ փաշան, հեղինական պատերազմին հողին, ան որ «թեսալիայ կենդանի քարակը» անուանած էր, եւ որ գերազանց ապացոյցը սուտե այն յարձակողական ողիին որ առաքինութեան մը պէս կը յանձնարարուի սպաներուն՝ զերմանական ուղղադատութեան դասադրքերուն մէջ:

Ֆոն տէր Կոլց փաշայի մեկնումէն ետքը, որ այսպէս համախմբած, դաստիարակած եւ բարոյացուցած էր սպայակոյտի սերունդ մը, վասնզ կար որ իր գործը կ'սրսուէր արեւելեան ծուլութեան մէջ, որ ամէն բանէ զօրաւոր է: Բայց անիկա անգույ զինանորոգուեցաւ Գերմանիայէն եկող թիւրք սպաներու օժանդակութեամբը: Որովհետեւ զիսնալու է որ գերման բանակը ինքն իսկ կը թիչ մը եղած է: Ամէն սարի տասներեք թիւրք երիտասարդ կ'ընդունի իր զինուորական վարժարաններուն մէջ, ուսկից զօրագունները կը մանեն: Անոնցմէ սմանը վեց սարի յաջորդաբար գերմանական համալըգեսար կրած են: Ֆոն տէր Կոլց շուտով հասկցած էր թիւրքի այդ զինուորական վարժարաններուն անբաւականութիւնը: Անոնց ծրագրերը բարեփոխած էր, եւ մեծ գոհունակութեամբ հաստատեց որ 1883էն մինչեւ 1895, անոնց աշակերտներուն թիւը 4,000էն 14,000ի բարձրացած էր: Բայց ինչ յոյս կարելի է գնել այդ վարժարաններուն վրայ, Բանկալթիի մեծ վարժարանին մէջ, լրտեսութիւնը սուն-տեղ ըրած է եւ անբարոյացուցիչներուն ամէնէն գէշը կը սարածէ: Իր գործակալները կ'ընտրէ ուսուցիչներէն եւ աշակերտներէն հաւասարապէս: Խմբովին ձեռքակալութիւնները, բանտարկութիւնները եւ աքսորը, իրենց ամէն հետեւանքներով, ամէն օր տեղի կ'ունենան հոն: Բանկալթիէն ելած սպայ մը զրեթէ ապահովապէս դատապարտուած է հեռաւոր պահակազօրքերը զրկուելու, Հայաստան կամ Հիճաղ, ու իրեն առջին փակ կը գտնէ Ռումէլիի եւ Այտրնի լաւ զօրագունները: Սուլթանը մոռցած չէ զինուորական վարժարաններուն գերը Ապախլ Ազիզի գէմ սարքուած պաւաղութեան մէջ: Կամովին, մարզանքը շատ երեսի վրայ թողուած է հոն: Դեռ վերջերս, ամէն զգուշութիւններով վեց նորաձեւ հրացան կը յանձնուէր ուսուցիչներուն, մէկ քանի հարիւր աշակերտի համար: Խոկո՞վ պիտի համարձակէր ինչպիսի օր ամբողջ վարժարանը այդ վտանգաւոր հրազեններով զինուոր: Օր մը, սխալ հրամանի մը պատճառաւ, զպրոցին վանդակադրան առջեւ

եկան՝ փոխանակ մէկի՝ երկու վաշտ, որոնց զլուխը պիտի անցնէին աշակերտները՝ հրամանատարութեան շաբաթա- կան մարզանքի մը համար: «Չինուորական պաշտօն- թիւն» աղաղակը բարձրացաւ, եւ, անկից ի վեր, մար- ղանքը արդիւուած է... Ասոր փոխարէն, Գերմանիայէն կը գառնան կուգան երիտասարդներ՝ որոնք կրնան բաղ- պատութեան մտնել ո եւ է բանակի սպաներու հետ. շատ քան սորված են, եւ, ի միջի այլոց, գերմաներէն լեզուն, զոր յօժարակամ կը խօսին իրարու մէջ:

Փոն աւեր կուց յաջողած էր ուրեմն իր պաշտօնին մէկ մասին մէջ: Իր ընկերները ու յաջորդները, մարե- ջախտ Քամբէօլէնէր փաշա, զօրաբաժնի հրամանատար կրումպըով փաշա եւ ծովակալ Քալան Փոն Հոֆէ նոյն- շափ բարեբաղդ չեղան: Առաջինը, որ հետեւակազօրքէն ելած է, ծովային յանձնաժողովի մը անդամ անուանուած է վերջերս. հաւանական է որ օր մըն ալ ծովակալը ձի գնելու զրկուի: Ծովակալը, շատ ազնուական մարդ, շատ նեղը պիտի մտնէր եթէ արդիւնք մը ուզուէր իրմէ.— տասնըչորս տարի սպասեց սրպէս զի Ոսկեղջիւրէն նաւ- սորմի մը դուրս ելլելը տեսնէ, հելլենական պատերազմին ատեն: Կրումպըով փաշան միայն իրապէս մասնակցեցաւ այդ պատերազմին, եւ իր մասնակցութիւնը շատ աննշան եղաւ, որովհետեւ գերման սպաներէն ո՛չ մին ուղղակի հրամանատարութիւն վարեց երբեք թիւրքիոյ մէջ: Սուլ- թանը արամաղիր չէ եւրոպական՝ նոյն իսկ գերմանական ձեռքերու մէջ ա՛րարողներու իշխող ցեղին եւ կրօնքին մի- ախ առանձնաշնորհուով: Օտար քրիստոնեայ մը կրնայ խորհուրդներ տալ եւ աստիճաններ ստանալ, բայց, ուր որ պետ մը պէտք է, իսլամ մը կայ: Կրումպըով փաշա, իր շատ իրական արութեանը ապացոյցը տալու անհամ- բեր, յաջողեցաւ սուլթանէն եւ Գերմանիոյ կայսրէն հրա- ման մը խղել թեխալիա երթալու համար: Ողիմպուր ան- ցաւ Էտհէմ փաշայի ետեւէն, եւ, առանց թուրնափօ կանդ աննելու, գաշաին մէջէն՝ ուժեղ ջոկատով մը՝ գնաց տիրանալու պարսկուած Լարիսային: Բայց հազիւ քիչ մը յառաջացած էր քառատրոփ, երբ ստուերի մը անցնիլը տեսաւ քոֆէ ի վեր: Սէյֆուլլահ գնդապետը եկած իրեն միացած էր. իսլամական զերիշխանութեան սկզբունքը փրկուած էր: Լարիսայէն ետքը, Պ. Փոն կրումպըով օս- մանիկի տկանակուտ պատուանշանը ստացաւ. բայց, առ- կից առաջ, Սէյֆուլլահ պէյը զօրավար ու փաշա եղած էր զրաւուած գերբէն վրայ:

Թեխալիոյ պատերազմին մէջ Գերմանացիի մը միակ զինուորական զորքը եղաւ աս: Պ. Փոն կրումպըով յան- կարծ Լարիսայէն ետ կանչուեցաւ: Հազիւ ութ օր ան- ցուցած էր բանակին մէջ: Վերջապահ բանակին մէջ ալ մէկ քանի սպայ միայն կային քաղաքային հազուատով, որոնց իրաւասութիւնները շատ յայտնի չեղան, եւ ի միջի այլոց երկաթուղիներու սպայակոյտի հարիւրապետ մը որ համախմբման միջոցները կազմակերպեց՝ բանակը շարժ- ման մէջ դնելու ժամանակամիջոցին: Այսու հանդերձ, զինուորական թիւրքիան իր յաղթանակին մասնակիցը

րաւ Գերմանիան, ուսկից իրեն եկած էին միակ խրախոյս- ները՝ պատերազմին սկիզբը: Իր զինուորական փառքին մէկ բաժինը անոր տուաւ Չերմուանդօրէն, իբր զիւցազ- նական մօր մը որուն պիտուար է հաւասարել եւ զոր զըժ- ուար է գոհացնել: Մայիս 4ի թիւրք լրացիրները սա պըզ- աիկ հատուածը հրատարակեցին որ ընդհանուր մտածու- մը ցոյց կուտար. «Եւրոպայի զինուորական թերթերը ընդհանրապէս կը հանին պատերազմին մէջ թիւրքիոյ հետեւած սիսդէմին. — խիստ յարձակողական՝ ցամաքի վրայ, պաշտպանողական՝ ծովու վրայ: Գիտելի է որ այս զրուութիւնն էր որ Գերմանիա ի գործ դրաւ 1870 ին» Առջի օրը՝ հպարտութեամբ յիշած էին գերմանացի զօ- սաշրջիկի մը՝ արձակուրդ առած սեղակալի մը ըրածը, որ «տեսնելով թիւրք վիրաւորներու անցնիլը, անոնցմէ մէկուն վրայ նետուած եւ զանի համբուրել յետոյ, մօ- տակայ խանութէ մը ծխախոտի տուփեր գնած եւ այդ մարդոց բաժնած էր:»

Հելլենական պատերազմը այն պատերազմներէն մին չեղաւ ուր կարելի է օգտակարապէս փորձարկել երկրի մը ուժերը: Եւ սակայն բաւական ճշգրտեամբ կարելի եղաւ չափել գերմանացի սպաներուն կատարած զորքին ազդե- ցութիւնը: Մեծ յառաջդիմութիւն կայ սպայակոյտներու սպասարկութեան, շարժման եւ ռազմազինական յասա- կաձեւներու (*) պատրաստութեան մէջ: Մնացեալին մէջ բան մը փոխուած չէ: Երբեք լաւագոյն կերպով ապ- ցուցուած չէր — թէեւ ալ ապացուցման չի կարօտիր — ներկայ պատերազմներուն մէջ ուսեալ ու քաջ սպայի մը գերազանցութիւնը՝ քաջ ու տղէտ սպայի մը վրայ: Շատ առիթներու մէջ, առանց անցեալի ու փառքի մարդիկ, շատ երիտասարդ ու շատ անձանթ, Էտհէմ փաշայի տեղը անցան, եւ անիկա արժանիքը եւ խելացութիւնը ունե- ցաւ անոնց արդեւ չըլլալու: Ափ մըն էին հոն. յիսունի չափ են Կ. Պոլիս նոյն խմբին: Եթէ սուլթանը հրաման տար իրենց, բանակ մը կը շինէին իրեն: Սուլթանը գեո ուրիշ բան չունի բայց եթէ արի զինուորներ, աշխարհի լա- յագոյնները, կ'ըսեն, բայց ամէնէն գէշ առաջնորդներով: Այդ զիւցազներու խումանով շատանալու է, թէ ոչ՝ բա- րենուրողութիւններու ճամբուն մէջ՝ այդ արութեան արժանի կազմակերպութիւն մը փնտռելու է: Հելլենական պատե- րազմը այս հարցը դրած է սուլթանին խղճին առջեւ:

Բայց այդ պատերազմը միջոց տուաւ հաշուելու Գեր- մանիոյ քաղած օգուտը իր զինուորական պատուիրակու- թենէն. թիւրք ժողովրդին մէջ, Գերմանիոյ զինուորական մեծութեան գաղափարը մտած է, եւ, անոր հետ, գերման անունին ազդեցութիւնը եւ հմայքը մեծցած է: Չինուօ- րական բաներու սերս'վը, որ իրենց առաջին եւ վերջին հրայրքն է, պէտք էր շահիլ թիւրքերուն միտքը: Զօրքը գերմանացնելով, թիւրքիան կը գերմանացնէին:

ՅՈՐԺ ԿՈՒԽՍ

(*) Ըսուեցաւ թէ Փոն աւեր կուց փաշա Յունաստա- նի դէմ յարձակողական պատերազմի մը ամբողջ յատա- կազիժը թողած էր եւ թէ զօրավար Էտհէմ փաշա հրա- ման ստացաւ զայն կէտ առ կէտ զործադրելու:

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՎԵՊ)

Ա. Մ Ա Ս

Ա

96ի շարդերէն վերջը, գաղթականութեան մեծ հոլը, որ սարսափահար հայ ժողովուրդը՝ իր ծննդավայրէն արժատախիչ ընելով՝ աշխարհի չորս կողմը կը ցրուէր, անոր մեծ մասն ալ քշած էր Եգիպտոս, որուն արեւելահանութիւնը կարծես կը քաշէր Հայերը եւ ուր փոխանցուած շարունակութեան մը անզգալիութիւնը պիտի կրնար ունենայ՝ զրեթէ միեւնոյն միջավայրին, տիպարներուն ու բարբերուն ընտանեկանութեամբ: Ասոր վրայ աւելցնելով սա իրողութիւնը թէ Եգիպտոս ունէր բնիկ հայ գաղթականութիւնը, զոր կ'ըսէին սրտանց աշխատող գաղթականներուն թշուառութեան թեթեւացումին, կը բացատրուի գաղթականներուն վիթխարի հոսանքը որ Եգիպտոս խուժեց, նախամեծարութեամբ ուրիշ ու եւ է երկրի:

Աղեքսանդրիոյ մէջ հոկտեմբերի վերջերն ենք, զրեթէ երկու ամիս ետքը Պոլսոյ ցոյցէն, որուն ուսմբերը՝ Տաճիկներու ուղղուած՝ Հայ արմատները շարդուիչուր ըրին, մինչ սարսափի հովը ոստերը ու տերեւները կը տարտընէր: Եւրոպ իրիկուն մըն է: Աղեքսանդրիոյ եկեղեցիին բակը, կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով անշուշտ, տարօրինակ ոգեւորութիւն մը կը պարզէ, փեթակի կամ մըջլաննոցի ոգեւորութիւն մը — առանց այս երկու գործատեղիներուն միւր աշխատանքին սակայն —, զուարթ ու ծոյլ ոգեւորութիւնը խառնիճաղանճ ամբոխի մը որ եկեղեցիին մեծ դռնէն կը տարածուի մինչեւ ներսերը, շարժուն, ձայնալից: Գաղթականներն են առանց, առաջին ցայտերը գաղթականութեան հոսանքին որ երկու ամսէ ի վեր անպարար Աղեքսանդրիա կը նետէ սարսափին առջեւէն փախչողներու, ինքնաքսորներու թշուառ խումբերը, եւ որ զեռ այս առաւ իսկ բազմաթիւ ընտանիքներ յանձնած էր Եգիպտոսի հիւրընկալ հողին: Եկեղեցիին պարտէզն ու բակը ալեկոծող ամբոխին հաւաքական դիմագծութիւնը՝ ուրախ ու անփոյթ՝ դիմագծութիւնը չէ կարծես ժողովուրդի մը որ զեռ նոր ճողոպրած է արիւնոտ արհաւիրքներէ եւ որուն կը սպանան մութ անսասագութիւններ: Ո՛չ սարսափի տեսարաններուն ահաւոր ու ցաւազին յիշատակը կը ցոլացնէ, ո՛չ սպառազին անձկութիւնները: Աւելի կը վայլէ ժողովրդի մը՝ որ երբեք չկապուած անցեալին հետ ահռելի յիշատակներով ու ապագային հետ մտայլ մտահոգութիւններով, ժողովուրդներուն պարզ հոգեբանութեան խորը կազմող ընդամին անհոգութեան ու զուարթութեան ազատ արտայայտութիւն կուտայ՝ վայրկեանական զգացումի մը սպաւորութեան տակ: Ճշմարիտ, բնական դիմագծութիւնն է սակայն տտիկա ամէն անհատի, ինչպէս ամէն ժողովրդի, որ՝ դերագոյն վտանգներէն ազատած՝ պահ մը կը հանգրուանէ բարոյական սեսակ մը թուլացումի մէջ,

ինքզինքը կուտայ ազատումի վայրկեանական անհուն երանութեանը, զգուշանալով կամ մոռնալով զայն թունաւորել անցուած զարհուրանքին յիշատակովը կամ ապագային սպանալիքներուն մտաբերումովը: Այս միջանկեալ վիճակին, մոռացումի երանաւէտ հանգրուանին մէջ են նաեւ գաղթականները: Ամիսներ վերջը՝ երբ դիտողը նորէն պիտի անցնի այդ տեղէն, ա՛լ չի պիտի տեսնայ այդ շահեկան ու վաղանցուկ արտայայտութիւնը գաղթականներուն դէմքին. շատ փոխուած պիտի գտնայ զայն, ու մտահոգութեան ամպերը ծանրացած:

Բայց այսօր ժողովուրդը զուարթ է ու անհոգ, ու կը թուի յուսալ: Արհաւիրքի երկրէ մը՝ ուրիշ կը վանէին զինքը հրէշային տեսարաններու պակուցումը, արիւնոտ յիշատակներու զաւարեցնող մտալիւմը, իր է՛ն էական իրաւունքին — ապրելու — վրայ միշտ առկախ ահռելի վրտանգները, փախած եկած էր քաղաք մը ուր կրնար ազատ շունչ առնել, ուր իր է՛ն թանկագին ինչքը՝ կեանքը՝ ապահովուած էր: Ասիկա միայն կը բաւէր իր զահանգութեան մը մէջ թուլցնելու, բնականօրէն տանելու զինքը մոռացումի՝ անցեալին ու անհոգութեան՝ գալիքին մտահոգութիւններուն հանդէպ: Երկրորդական պարագաներ ալ աւելնալով այս գլխաւոր ուժով շարժառիթին, կը կատարելագործէին անոր արդիւնքը: Միամիտ, խօլ հրճուանքը զոր կը զոյայն գաղթականները՝ սեանելով անսահման ազատութիւնը խօսքի, շարժումի, — յեղափոխական լրագիրները որոնք բարձրաձայն կը կարգացուէին, յեղափոխական խօսակցութիւնները, ճառերը, ազգերը ազատ համարձակ, բաց օգին պարզուած, Սուլթանին, Տաճիկներուն դէմ՝ հայհոյանքները, սպանալիքները անպատիժ պոռչուած, զիշերային պոռոյաները աներկիւզ մինչեւ երբ որ կ'ուզես երկարուած, — մինչդեռ քիչ առաջ կը խղզուէին Պոլսոյ հաւատաքննական մթնոլորտին մէջ, ոստիկաններու, ձերբակալումներու, բանտի, տանջանքի մշտական սպանալիքին, զարհուրելի մղձաւանջին ճնշումին տակ. միամիտ յոյսը, նոյն իսկ իրենց հոգեկան վիճակէն բղխող, Մեծ Պետութիւններու կողմէ ներկայացուած բարենորոգումներու ծրագրին. իրենց մեծ մասին համար բոլորովին նոր հաճոյքը ճամբորդութեան մը, նոր երկիրներու, տեղերու, դէմքերու ծանօթութեան, — բան մը որ կրբեք պատահելիք չունէր առանց այդ մեծ ցնցումին. — սոսալին անգամ ըլլալով իրենքզինքն այնքան մօտէն շրջապատուած, ընդխառնուած տեսնել ազգակիցներու խուռն զանազանութեան մը, ամէն տարագնեքով, ամէն գաւառաբարբառներով. — աւելցուցէք նաեւ ասոնց վրայ այն քիչ մը եսամոլ հանգստաւէտութեան զգացումը զոր կ'ունենային այնքան վիճակակիցներ, բազմակիցներ սեանելով իրարու, զեռ գալիքներուն ակնկալութեամբը ա՛լ աւելի շեշտուած. այն հաճոյալի անակնկալները, ծանօթներուն յեղակարծ հանդիպումները, — Վա՛յ-գո՛ւն-ալ-մի-հո՛ս-ես, գո՛ւն-ալ-մի-եկարնեք, զոր գաղթականութեան շարժումը իր ամէն մէկ ժամանակին կը հրամցնէր գաղթականներուն, ու մանաւանդ սա իրողութիւնը թէ քսակները, տակաւին

քիչ շատ պարտաւոր, թոյլ կուտային իրենց հիմկուհիմա շքեղիլ ապագայով, որուն անստուգութիւններէն, անձ- կութիւններէն արդէն զիրենք — գէթ ատենի մը համար — գերծ պահելու երեւոյթը ունէր Առաջնորդարանին սա երկ- րորդ յարկի կանանչապատ սենեակը ուր Աղաները ստէպ կը գումարեն «Գաղթականաց Նպաստամատոյց Յանձ- նաժողովը», քաջալերող ու բարեկամ անուն մը որ յոյսի մը, ապահովութեան պէս կը շողայ խեղճերուն աչքին, ու կը հասկնաք թէ ինչո՛ւ հոկտեմբերի այդ շաբաթ իրիկունը եկեղեցիին պարտէզն ու բակը կոհակաւորող ամբոխը զը- ւարթ է ու մոռցունքոտ, ու լաւատես՝ ներողամիտ, հաւա- տալից ըլլալու աստիճան Յեղափոխութեան հանդէպ, զոր չի պիտի ուշանայ սակայն գատափետել ու անիծել իբր մի- ակ պատճառը իր գոթաղբութիւններուն:

Ամէն տարազները, բարբերը, շեշտերը կան այդ այ- լասեռ, խառնիճադանձ ամբոխին մէջ, ուր Գոթաղբութեան հասարակացութենէն ծնած՝ դասակարգային ամէն արհա- մարհանքները, նախապաշարունները վանող եղբայրասէր գիրկընդխառնումի մը մէջ եկած են հաւաքուիլ Պոլսոյ ամէն թաղերէն, էն զոնհիկներէն ինչպէս էն «ագնուպետա- կան»ներէն, Սամաթիայէն, Սալմաթօմրուքէն ինչպէս Գա- տը գեղէն ու Օրթագեղէն, մայր-հայրենիքին ամէն գա- լաններէն ներկայացուցիչներ, ամէն գաստիարակութիւն- ները ու ամէն գասակարգերը հայ ժողովրդին, որուն հա- լաքական մանրանկարը, համայնապատկերը կը պարզէ դիտողին աչքերուն: Ճակատագրային համերաշխութիւնը միեւնոյն գագցումով, արտայայտութիւնով կը կենդանաւո- րէ բոլոր այդ այլախալ գէժերը, եղբայրական կապ մը կը հաստատէ այդքան հակընդդէմ բարբեր, գաստիարա- կութիւններ ներկայացնող անհատներու մէջ, որոնք, գե- րագոյն տաղնապին վաղորդային՝ մոռցած են կարծես թէ այս ինչ գասակարգին կը պատկանին, այն ինչ տիտղոսը, զիրքը, գաստիարակութիւնը ունին, ձեռք ձեռքի տալու ու յիշելու համար թէ Հայ են, միեւնոյն վիճակներէն ան- ցած ու միեւնոյն բաղդին նախասահմանուած: Իր տար- աշխարհիկ տարազովը գունազեղուած գաւառացի բեռ- նակիրը, բանուորը, ձկնորսը, զարգացածի երեւոյթով սալոնի շիբ բրիտասարդը՝ գլխարկը ծուռ ճակատն ի վար, ու գաւազանը ձեռքը, դպրոցէն նոր շրջանաւարտը, զը- րադէտը կամ զրագիրը, էսնաֆը, շուկացի երիտասար- ղը, ֆէսաւոր նախկին վաճառականը իսկ, ամենքն ալ զի- րար կ'արմկեն, կը զէմզէմեն, կը քոլընտեն, անսեթեւեթ ընտանութեան մը մէջ որ ենթադրել կուտայ թէ այդ գա- սակարգերու սահմանները նշանաբարող արհամարհական վերադիրները, — պարոն, շաբաղը, զէվլէկ, համալ, զրսեցի եւայն, — ա՛լ անհետացած ջնջուած են մեծ մրրկին մէջ որ հայ ազգին ամէն կարգերը միեւնոյն ահ- ուլի հարուածով հարուածած, տակնուվրայ ըրած, իրար խառնած էր:

Այդ բոլոր գասակարգերը հասարակաց բան մը ու- նին արդէն, զլխարկը, ինչ որ Պոլիս կը ծառայէր նորերը, զարգացածները զատելու ետ մնացածներէն, հին-գլուխ- ներէն, գործի մարդերէն: Ֆ'սերը բացառութիւններու

պէս կը պարտէին եւրոպական բիրաձեւ գլխարկներու բազմութեանը մէջ, — գաղթականներուն առաջին գործը ըլլալով, իբր առաջին շարժում, ապացոյց ազատութեան, ու իբր ճառի մը սուլթանին, Եգիպտոսի հողին վրայ սաք զնեխուն պէս, մէկգի նետել գերութեան ու սարսափի օ- րերու յուշարար կարմիր գտակը:

Ամբոխը կը շատնայ, շարժումը կ'ոգեւորուի, հեա- ըզհեաէ որ սաուերները կ'իջնան աշնային վերջալոյս- ներու խաղաղ, փափուկ ու հիւանդոտ գունաւորում- վը երանդաւորուած երկինքն ի վար: Եկեղեցիին ընդար- ձակ պարտէզին խոշոր գոնէն անդադար երթեւեկ մըն է գաղթականներու, բոլորաձեւ փոշոտ, մոխրոտ ճամբու մը մէջէն, որուն երկու կողմերը կը սլանան նուրբ ու վայե- լուչ սիլուէթները արմաւենիներուն, փնջաւորուած հովա- հարաձեւ փթթումովը իրենց կանաչ տերեւոյքին որ շնոր- հայի ու ճկուն հակումներ ունի իրիկուան հովին, — բա- րեկամական բարեւներ կարծես գաղթականներուն հաս- ցէին:

Եկեղեցիին բակին ամբոխը կ'անշարժանայ բազմա- թիւ խմբակներու մէջ որոնք կը քակուին ու կը լեցուին անդադար, առանց զրեթէ արելու իրենց հոծ ու կայուն զիրքերը, որոնք մէջտեղերէն, քովերէն, լճացած ջրակոյ- տեր եզերող ջրի վազուկ ընթացքի մը պէս, կ'անցնի կը յուզուի երթեւեկող, ելումտող, զատուող կամ միացող մասին ոգեւորութիւնը:

Հոս խումբ մը, ուկնդիր, կլորցած է երիտասարդ յե- ղափոխականի մը շուրջը որ բարձրաձայն կը կարգայ «Դրօշակ» թիւ մը, արիբունի շարժումներով պատկերա- զարդելով բռնկած ու պայթող խօսքերը... «Կոնի, մի՛շա կոնի... ահեղ պայքա՛ր... Հայեր, ժամը հնչած է կոռեւ- լու, զէ՛նք առէք...» Արդարեւ ճիշդ ժամն է կոռեւու... գաղթականներուն համար: Ուկնդիրներուն աչքերը քա- ջութեամբ ու վրէժնորութեամբ կը վառին, ձեռքերը կը թուին սպառնալից շարժումներ ուրուագծել: Գիչ մը ան- զին, դպրոցին առջեւ, մարդիկ ժողովուած են՝ հետաքրքիր՝ նորեկ գաղթականի մը բոլորաբը որ Պոլսոյ վիճակին վը- րայ տեղեկութիւններ կուտայ: Հեռուն եկեղեցիին զրան առջեւ, խումբ մը գաղթականներ, ձեռքերնին ետին ծալած կամ քոփէ ի վեր կախ, զբաղած են կարգալու ազգեր կամ օրուան թղթաբերով հասած նամակներու ցանկը: Ուրիշներ կը խօսին, բարձրաձայն, ամենքը մէկանց: Դիմացը, Ա- ռաջնորդարանին լայնաբաց զրան առջև կը սպասեն գաղ- թականներ. ասիկա խնդրակուններու, անմիջական նպաս- տի կարօտներու խումբն է որ Աղաներուն գալուստին կը սպասէ՝ ժողովաւենեակ ելլելու ու խնդրելու համար: Ա- սոնց զէմքը մտաւուքի կնճիւններն ունի, ու կեցուածքը՝ խնդրանքին նուաստացումը: Անհաշա խազն է ասիկա, սև բիծը անհոգ ու ուրախ պատկերին զոր կը պարզէ ամբոխը:

Այդ գանազան խմբաւորութիւնները կեզրոններն են ուր կուզան հեազհեաէ հանդուլի նոր եկողները, որոնք խումբէ խումբ կը պտըտին, հետաքրքրութիւններն քանի մը վայր- կեան հաւաքումի մը քով կեցնելէ վերջ՝ զէպի ուրիշ մը կ'ուզուին:

Ընդհանուր ազմուկին, շարժումին մէջ՝ տեղ տեղ՝
զուարթ զարմացումի բայագանչութիւններ, ծիծաղկոտ
մերձեցումներ, — անակնկալ հանդիպումները ծանօթ-
ներուն .

- Վա՛յ, դո՛ւն ալ հոս ես :
- Հապա՛, ամիս մը եղաւ :
- Գլխարկ զրեր ես տէ չճանչցայ :
- Հապա՛, գլխա՛րկ ես՛, զո՛ւն ալ պիտի գնես վաղը
մէկալն՝ օր :

— Ե՛րբ եկար :

— Ա՛յօր :

— Է՛ Պոլիսէն ի՛նչ լուր . . . Գիրգորը ի՛նչ եղաւ, ո՛ր
գնաց :

Հարցումներ, լուրեր, տեղեկութիւններ, նորեկին ինչ-
պէս հինին կողմէն, Պոլսոյ վրայ, Աղեքսանդրիոյ վրայ :

Հին գաղթականը ինքնալստահ, տեղեկ ու քիչ մը
անափառ շեշտը ու ձեւերը կ'առնէ մէկու մը որ առաւելու-
թիւն մը ունի գիտացիւնին վրայ . հաճոյք մը կը շինէ ինք-
զինքին՝ նորեկ գաղթականին միամիտ զարմացումը զրգռել
նոր քաղաքին սքանչելիքներուն թուումովը : — Եիտա՛կը,
ազու՛՛ր քաղաք, կ'ըսէ նորեկը : — Դեռ ի՛նչ տեսար որ,
կը շտկէ միւսը՝ հեգնական ծիծաղով մը . Երեթիֆ փաշան
տեսա՛ր, Բոսդ Ռոզղը, Բառաքօլ Աթթարինը, Սան-
Սթէֆանօս . . . կատարեալ ազատութիւն, պիշերը մինչեւ
լոյս պարտէ, բան ըսող չի կայ . . . Տաճիկներուն, Համիաին
զէմ հայհոյէ, բա՛ն ըսող չի կայ . . . փողոցները մաքուր,
կանոնաւոր . . . շունին հոսը չի կայ : — Իրա՛ւ, կ'ըսէ միւսը
զվայլած, շուն չի կայ հէ՛ . . . ի՛նչ կ'ըսես պէ՛ . . . աս ի՛նչ
ազուոր քաղաք :

Պոլիսը մոռցուած էր :

— Սա խումբը ի՛նչ կ'ընէ կոր : — Ի՛նչ պիտի ընէ,
« Դրօշակ » կը կարգան կոր : — Վա՛յ, « Դրօշակ » հէ՛, ա-
զատ համարձակ . . . հա՛ հա՛, Պոլիս ի՛նչ վախով դողով
կը կարգացուէր :

— Սըւոնք ի՛նչ է, կը հարցնէ՝ մատովը ցուցնելով
Առաջնորդարանին աջ կողմը տարածուող բազմաթիւ վը-
րաններ, աղքատ գաղթականներու յանկարծակիքաւ բնա-
կարանները :

- Ի՛նչ պիտի ըլլայ, գաղթականները մէջը կը նստին :
- Վա՛յ . . . — Դեռ զո՛ւն բա՛ն մը չտեսար, եկուր քե-
զի ներս տանիմ :

Ջարմացած, զուարթացած, նորեկը, չորս կողմը գի-
տելով, խմբակները հետաքրքրօրէն քննելով, կը հետեւի
իր բարեկամին որ մէկու մը հնութիւններ կամ հետա-
քրքրական առարկաներ ցուցնողի մը, բացատրողի մը
յաւակնոտ գէմքովը, շարժումներովը կ'առաջնորդէ զինքը
նրս :

- Նայէ հոս :
- Աս ի՛նչ թօհաֆ բան է պէ՛ :

Իրաւունք ունի : Գաղթատեղիին այս երկրորդ մասը,
միջին գոնէն տարածուող մինչեւ քարակիր ցած շէնք մը,
բոլորովին տարբեր տեսարան մը կը պարզէրակինէն : Տեսակ
մը գիւղ է մանրանկար, կամ քաղաք մը՝ հողէ պզտիկ

տարածութեան մը վրայ խտացած կարծես, խճուղած,
բազմամբոխ, աղտոտ, աղմկալից, գոհհներով, քառուղի-
ներով, անեղներով, փողոցներով, ու հրապարակով իսկ :
Հոս կը բնակին չքաւոր գաղթականներուն մեծ մասը,
տախտակաշէն ցած ու խեղճուկ խրճիթներու մէջ որոնց
երկար ու նկարչագեղ շարքը կը սարածուի եկեղեցիին
ուղղութեամբ պատի մը երկայնքը : Կարասիներ, անկո-
ղիններ, ձորձեր, կողոպուտի աւելցուցներ մեծ մասամբ,
խառն ի խուռն գիւղուած, երզնուած են ներսերը, կի-
սաստուերին մէջ, ուր գաւառացի կիներու կամ տղեկնե-
րու շարչարուած գէմքեր կը նկատուին տեղ տեղ : Հոս
հոն, ամէն տեղ, քով քովի, դէմ դիմաց, աներեւակայելի
առատութիւն մը սրճարաններու, ճաշարաններու, սափրի-
չի, նպարալստառի, ծխալստառի կրպակներու, մօրճի
քանի մը հարուածներով հասչտապ կանգնուած, ճերմակ
տախտակին վրայ խոշոր ու կոշտ գրերով սեւ անշատուող
« ՃԱՇՍՐԱՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ », « ՍՐՃԱՐԱՆ
ԳԱՂԹԱԿԱՆԱՅ », « ՆՊԱՐԱՎԱՃԱՌ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ »
եւայլններով : Եւ որովհետեւ իրիկուն է, այս վայրին ալ
կարեւորութիւնը կը շեշտուի, ոգեւորութիւնը կ'աճի, կ'աղ-
մըլի, բակին ամբոխը տակաւ հոս կը լեցուի, հանգչելու,
ծխելու, ճաշելու :

Տեսակ մը մրցում կը տիրէ խանութպաններուն մէջ,
մեծ մասամբ պատահական : Հանդպողը երկու տախտա-
կով խանութ մը կանգնած ու ինքզինքը մէջը դրած է,
— օտապաշի մը սր խոհարար եղած է, շուկայի խանութ-
պան մը որ սրճարան բացած է, բեռնակիր մը որ նպա-
րալստառութիւն կ'ընէ, յեղափոխական մը որ ծխախոտ
կը ծախէ . . . Թերեւս նմանութիւն մը նշմարելով վառօդին
ու ծխախոտին մոլխին մէջ : Գրեթէ ամէն արհեստները
ներկայացուցիչ ու խանութ ունին այդ անձուկ շրջափա-
կէն մէջ ուր խիտ ամբոխ մը կը խճողի, կը յուզուի : Գաղ-
թականներուն մեծագոյն մասին վաճառանոցը, շուկան,
զբօսարանը, բնակավայրը, ամենքն ալ սղմած են հող :
Խանութպանները, նեղկճուկ ծակերու մէջ թխմուած, ի-
րենց նիւթեղէններուն մէջ գրեթէ կորսուած, բազուկներ
ու գլուխներ կ'երկնցնեն միայն, խզուելու վրայ եղող
մարդերու պէս : Խոհարարները որոնք մեծամասնութիւն
կը կազմեն գաղթականներու արհեստապետութեան մէջ,
— քիչ շատ կերակուր եփել գիտցող (ո՛ր հայ կիներ չի գի-
տեր) կիներ մը սննեցողը երեք-չորս սան առած ու կանաչեղէն
ջարդելու սկսած ըլլալով, — պայմանադրական ճերմակ
զոզնոցը կուրճեքերին ի վար, շերտիւր ձեռուրնին, շոգար-
ձակ սաներու շարքին առջեւ կը սպասեն կազմ ու պատ-
րաստ՝ մեկնելու վրայ եղող շոգենաւի մը նաւապետին
պէս, իր կամըջակին թելորմին առջեւ կանգուն : Կոշեր,
հրակներ, կերակուրի անոններ իրար կը խաչաձեւեն
օդին մէջ . . . հրամմեցէ՛ք . . . հրամմեցէ՛ք . . . Ձէթի, կարա-
զի, ապուրի, տեսակ տեսակ արեւելեան կերակուրներու
տաք, համեմտ, քիչ մը ճենճոտ բուրուսներ կափարիչ-
ներէն զուրս խուսափող շողիներուն հետ օդին մէջ կը ծա-
ւալին, ճնշող ու ախորժատու :

Սրճարանները լեփ լեցուն են, դեռ ճաշարաններուն

համար կանուխ ըլլալով, խառնիճաղանճ ամբոխով մը որ կը պոսայ, կը հայհոյէ, խմելով ու ծխելով միանգամայն: Հոս՝ ամենուն աչքերը ուղղուած են « Բաբական » լայն բացուած թիւի մը վրայ. վիզեր կ'երկնան, աչքեր կը քթթին, ականջներ կը տնկուին. մէկը, ոտքի վրայ, կը բացատրէ, կը ցուցնէ, կը կարգայ բարձրաձայն ծաղրադէմքերուն վրայ գրուած անունները... « Աս Մոսկոֆն է, նայեցէ՛ք, Տաճիկին ճիտէն բռներ է... անդին Ինկիլիզը... »

Բարձրաձայն խորհրդածութիւններ, մեկնութիւններ, քրքիջներով, Համիտին ուղղուած նախատինքներով վերջացող:

— Հայուն համար բան մը կ'ա՛յ, կը հարցնէ անդիւն ծերունի մը: — Հապա՛, չե՛ս տեսնար կոր, սըւիկա Հայն է... դուրսը բարախ մը կ'այ: — Ասոր նշանակութիւնը սա է որ... կը բացատրէ անդիւն քաղաքագէտ մը...

Ուրիշ սրճարանի մը մէջ, կարճահասակ, արաբադոյն, թաւ յոնքերով, կոր քիթով, ճոռոմ ու յաւակնոտ շարժումներով մէկը, պոլսեցի պատուելի մը, օրուան հեռագիրները բարձրաձայն կը թարգմանէ, յիշողութեամբ, ճառ կարդալու պէս.

— Մոսկոֆը թիւրքին լուր զրկեր է որ... Փոսանըզը կ'ըսէ կոր որ...

Անդին, ջարդի, կողոպուտի պատմութիւններ կարգաւ, պատմողին տփոզութիւնը գրգռող՝ ուկնդիրներու յաճախակի ընդմիջումներով — Ատ Ի՛նչ է քի, իմ գլխուս եկածը մտիկ ըրէք դուք... Հիմակ որ ա՛լ ազատած են Իրենց պատմած վտանգներէն, գաղթականները տեսակ մը պչրանք, ցուցամուրութիւն կը գնեն մրցելու համար իրարու դէմ թէ ո՛վ աւելի « շատ բան տեսած է », ո՛վ աւելի մօտ գտնուած է մահուան: Չմոռնանք ըսելու նաեւ որ մեծ մասամբ յեղափոխական են... բանտ պակիւս... Պոլիս լրագիր բաշխած... Տասնապետ եղած, եթէ ո՛չ աւելի... խորհրդատու տատանումներ ունին գլխու, որ շատ բան կ'ըսեն իրենց յեղափոխական անցեալին վրայ:

Ինչե՛ր չեն ըսուիր այդ սրճարաններուն մէջ՝ ուր ժողովրդական տարրը կը տիրապետէ կոշա, պատկերալից, տաճկախառն լեզուի մը մէջ, ուր գաւառները իրենց շեշտիբը կը զրկեն ու ամէն գասակարգերը իրենց բացատրութիւնները: Բառախաղեր, « ռաքէկ » ի գնդակներու պէս Իրարու նետուած կատակներ, ընդհանուր քրքիջի մը մէջ երկարաձգուող, որ կը մարի՝ պահ մը նորէն բռնկելու պայթելու համար պզտիկ կայծէ մը, բարձրաձայն, ծիծաղկոտ խորհրդածութիւններ, խօսակցութիւններ օրուան զէպքերուն վրայ, քաղաքականութեան, հայկական խնդրին վրայ, նոր հասած ճամբորդներուն, Պոլսոյ վիճակին, նպաստամատոյց յանձնաժողովին վրայ, ընդհանրապէս լաւատես, յուսալից, եւ որոնք կը վերջանան լուսանքներով, հայհոյանքներով, բռունցքի սպանալիքներով ընդհանուր թշնամիին հասցէին, սուլթան Համիտին, զոր կ'որակեն տարօրինակ վերադիրներ, պայմանադրական կամ նոյն վայրկեանին ստեղծուած, նոյնքան առիթներ քրքշոտ զուարթութեան: Հոս ու հոն վերապահումներ, չէզոք ու

թիւններ սակայն... ծերունիներ, լուրջ մարդեր, որոնք խորհրդատու երերումներ ունին գլխու, կամ հեզնական ժպիտներ խօշ յոյսերու պոռչուցիկ հանդէպ... զարգացած երիտասարդներ՝ որոնց ճաշակը կը վերաւորուի ժողովրդական ոչ այնչափ գասական բառարանին անպատկառ ծաւալումէն:

Խայթող հեզնութիւններ չեն պակսիր:

— Հէ՛, միտի՛ւ, Ի՛նչ կ'ըսես... կը հեզնէ անկեղծ ու բաց զէմքով նախկին ձկնորս մը, շարժումով մը, շեշտով մը որ համարձակ ու հաստ լայնութիւնը ունի իր ուռած տաբատին, իր մէկ կատակէն վերջ՝ որ ունկնդիրներուն քրքիջը վառած է ու չհանող լուութեանը, անտարբերութեանը բազիւս գլխարկաւոր երիտասարդի մը, թէյ խմելու համար հոն նստած պատահմամբ: Այդ երիտասարդը, հազիւ քսան տարեկան, երկայնահասակ, շիք հագուած, սրածայր մօրուքով, եռանկիւնաձեւ գլխով, շեղ կիսագէմքով, մէկն է այն երեքէն զոր գաղթականները ստէպ կը տեսնան իրենց մէջ, իրենց քով, բայց բոլորովին անշատ, օտար իրենցմէ... առանց խառնուելու իրենց, ուշադրելու իրենց խօսակցութեան, գրեթէ միշտ գիրք մը ձեռուրին — Չօպանեանի « Երազիկ » ներք, հին « Մասիս » ներ, Փրբաններէն վէպեր, — ու խոշոր բառեր բերանին — Արուեստ, փիլիսոփայութիւն, Հիւլիօ, Վէլուէն... գրագէտներ կ'երեւայ թէ, Ինչպէս կ'եղան մեր դպրոցներէն, զոր ահանելի ցնցումը կարծես չէ արթնցուցեր իրենց երանաւէտ քունէն, եւ որոնք, գաղթականներուն մէջ, թշուառութեան խեղճուկրակ տեսարաններուն մէջտեղ ալ, իրենց գրական երազը կը շարունակեն, անհոգ, աչքերնին գոցած իրականութեան՝ որ շատ ժպտուն ըլլալու չէ իրենցմէ երկուքին, որոնց զգեստները ու նիհարցած զէմքը թշուառութեան նախատինքները կը կրեն:

— Պարո՛ն գլխարկաւոր, սա « Բաբական » ն կը հաճի՛ք թարգմանել:

Խանութիւններուն մէջտեղը բաց ձգուած « Հրապարակին » վրայ, խումբ մը ժողովուած է: Երիտասարդ մը, կաս կարմիր, կարճահասակ, կարծիք, իրանի ու ձեռքի բուռն, ծայրայեղ շարժումներով որոնք կը սպանան զինքը վար տապալել, աչքերը կոպիճներէն զուրս, բերանը փրփրոտ, կը ճառէ. — Ժողովուորդ, փրկութիւնը քննէ՛ է... Ժողովուորդ, ցնցուէ՛... Թիթիլ՝ թուրքութիւնդ, ժողովուորդ... Ժողովուորդ... Ժողովուորդ... Ումանք կը խնդան, ուրիշներ անհամբեր կը հեռանան, շատեր երկիւղած լուութեամբ մտիկ կ'ընեն... որովհետեւ բա՛ն մը չեն հասկնար:

Չափահաս կին մը, խորշուուտ ու նիհար, փէշերը վեր առած ու շալ մը գլուխն ի վար, պահ մը կանգ կ'առնէ, մտիկ կ'ընէ, ու սուր քիթը ծովակելով կը հեռանայ. « Վու՛յ, կըռարառ կը խօսի կոր... »

Տեղ տեղ կոփներ կը բռնկին, տաք վիճաբանութիւններ... բայց բազմաթիւ ձայներ ամէն կողմէ կը միջամտեն քրքշոտ, « մալէ՛շ, մալէ՛շ »... Մոգական բառը, առեւելեան անհոգութեան, ներողամտութեան գերագոյն բացատրութիւնը, որ հաշտութեան փողի մը պէս կը հնչէ է՛ն հետա ականջներուն, որ էն կոուազան ձայները կը

խափանէ իր արաբահունչ վանկերուն լայն թաւալումովը ,
էն խոժոռ գէմքերը կը պայծառացնէ , պրկուող բոռնցք-
ները կը քակէ , ուրուագծուող կռիւները կը լռեցնէ , — ա-
ռաշին արաբերէն բառը զոր Հայերը սորվեցան հաճոյքով ,
Եգիպտոս համեմունն պէս , եւ որ իրենց խօսակցութիւն-
ներուն հիւսքին մէջ անդապար կը հնչէ , կը յեղ յեղուի ,
կը վերադառնայ , քրքիջներով , ա՛յնքան կը համապատաս-
խանէ ան իրենց բնածին հակումներուն , մեղկ ու անհոգ
խառնուածքին :

Կազերը վառուած են : Ճաշարանները լեցուած , ու
պարպուելու ալ վրայ :

Կ'երգեն զազթականները . հայրենասիրական երգեր,
մարտագոռ .

Տարւորիկի զաւակ եմ քա՛ջ...

Կամ մեկամաղձոռ .

Հայրիկ ջա՛ն... ծառայ եմ ձայնի՛գ...

Խազեր կը բարձրանան , կ'անջատուին , յստակ ու
լուսաւոր , ընդհանուր ազմուկին շփոթ խորքէն :

Եկեղեցիին բակը , կը մենանայ կ'ամայանայ տակաւ :
Եկեղեցիէն զուրս բնակողները կը մեկնին տակաւ : Առաջ-
նորդարանին գոցուած դրանը առջեւ զազթականներ կայ-
նած են , քիչ մը առաջուան խնդրարկուները : Տեղուհ կ'ե-
րեւան . բողոքի , զայրոյթի խօսքեր ունին ումանք , բամբա-
սող ու բուռն . ուրիշներ , վհատ , կը մտմտան , աշուրնին
գեական յառած , մարմիննին լքումի կեցուածքի մը մէջ մէկ
կողմ հակած .

— Բէքմէզեանը շատ գէշ մարդ կ'երեւայ կոր... բա-
նը... Պօղոս էֆէնտին... աղէկ է ամա՛... :

— Քեզի՛ ի՛նչ ըսին :

— Ի՛նչ պիտի ըսեն... սպասէ՛ , ստակ չի կայ :

Գազթաւայրը անդին՝ ներսը՝ իր ծխալից ու լուսաւոր
մթնոլորտով , իր հրթիռներու պէս ամէն կողմէ փրթող ,
իրարու բաղխող , խառնուող կոչերով , ձայներով , խնդուք-
ներով , սլացող երգերով , հոլանտական քերմէսի մը խառ-
նիճազանձ ու ազմկալից ողբերգութիւնը , տեսիլքը ունի ,
կարծես հայ ազգին հոգ ժողովուած մասը՝ իր մահուրնէ
ազատումը , ապահով երկիր մը յաջող փախուստը ու-
զելով տօնել խօլ զուարթութեան մը ամէն արտայայ-
տութիւններով , թիւրք բռնապետութեան մամուլին ճնշու-
մէն ա՛լ գերծանած իր ազատութեան պէտքին , բնազդին
սանձարձակ շարժումներովը , եզրպատական ճոխօրէն առ-
տեղացան երկնքին տակ՝ որուն մութ թաւիշին վրայ
կ'անջատուին հովէն շարժող արմաւենիներուն նուրբ ի-
րանները , լապտերներուն ցոլքերովը լուսածիր :

ՊՈՐՈՅՐ

ՊԻՋՄԱՐԳ

Աս ալ մեռաւ :

Ո՛վ Մահ , եթէ ուղղագատ

Պատժաբաշխ ըլլայիր՝ ըզքեզ անընդհատ
Պիտի օրհնէինք մենք . բայց պաշտօնըդ դուժ
Դահճական՝ դու յաճախ կը կատարես ուշ ,
Կամ անիրաւ , մերթ ձեռքըդ կը թուանայ ,
Ճօճացընել կարծես կարող չէ գահնայ :
Երբ կը գըտնես սըրտիդ հաճոյ արբանեակ
Որ վըզին է կախած ժանտութեան մանեակ՝
Կը խընայես անոր . թոյլ կուտաս յաճախ
Որ լիբբ , ամբարտաւան , շարաւաթաթախ ,
Աղտոտաբար օգնէ քեզ , արօրդ վարէ ,
Փըռէ երկրիս վըբայ հունձք մը խաւարէ ,
Գործակիցըդ գառնայ . փըրփըրէ գաշխարհ ,
Համարի մարդկութիւնն ամբողջ արհամարհ ,
Ջանայ ընկուզանել այն կուրն օգնութեան
Որուն արի սըրտեր առաջնորդ կ'ըլլան .
Կ'երթան թըշուառութեանց շաղիգները՝ցիր
Ժողովել զըթութեամբ անգուլ անձանձիր :
Թոյլ կուտաս որ արեամբ թաց գեանին վըբայ
Կրկնակ սկըր բըռնած ան ձեռքը՝ պար գայ :

Այս գոհըդ քու վերջին կը ծաղրէր ըզմեզ .
Իբրեւ մարդ՝ ի հարկէ գոհ էր մեծապէս
Որ կոտորած կ'ըլլայ , բընաւ չէր գըթար :
Իբրեւ քաղաքագէտ՝ կը գտնար ճարտար
Սուղանն ու խորամանգ , ուշիւմ , հեռատես ,
Կ'արձակէր մըրմըռոց գամփըռ շանցը պէս ,
Երբ քամին կը բերէր անոյշ մահահատ :
Ի՛նչ էր գէպըը — խեղճ ազգ մը կիսածանօթ
Բընալինջ կ'ընէին ահա — դա սչինչ .
Թըրթուրներու պէս թո՛ղ ընեն բընալինջ :
Կը խընգար : Գարեջրոյ լի բաժակ առջին
Միաքը կը դբօնուր մեծանուն վարչին :
Ծըխափողը կախած դաժան բերանէն
Կը փիլիսոփայէր — թող խարազանն
Շալակը մարդկութեան , կ'ըսէր , պինդ է ան .
Պէտք է վարժեցընել զանի հըլութեան :
Խիտ անտառ մըն է ան , գ . ր ձեռքըդ տապար
Միայն ճեղքել կըբնաս ապահովաբար .
Յու է ան կատաղի՝ զոր պէտք է նուաճել .
Ի զուր է ողորմիլ , քըծնիլ , աղաչել ,
Առաւել խեղ 'ւ անսաստ կը տեսնես զանի .
Երբ անոր ցուցընես հալաւ ծիրանի
Դու ապըստամբութեան՝ կ'ըլլայ խելաթափ ,

Չունի յիմարական յուրութիւնը չափ :
Արդ թուր իշխանութիւնն ալ ձեռքը պատրաստ
Պէտք է գիտնայ զանի գարձընել բզգաստ :
Եւ պէտք չէ խընայել, մեծ վըտանդ է դա :
Երկինք պէտք է շանթել՝ եթէ որոտայ :
Այսպէս միայն հընար է երկրիս բոլոր
Երջանկութիւն շնորհել, խաղաղութիւն խոր :
Ո՛վ որ զօրաւոր է՝ թող ան լիպպինդ
Բուտը ճարէ ցըյագ, թող վայելէ խինդ,
Թող զաւակ ծընանի, հընազանդ ըլլայ .
Կայսրը կը տարածէ աջն սնոր վըրայ :

Սա որ այնչափ ապուշ ուսմկարար մեռաւ
Անատակ բուժելու կատաղի ծարաւ՝
Պարզ գայլը հիւսիսի էր սովալըլուկ,
Որ կը բերկրի երբ թուխ պէս ձիւնաբեր բուք
Կը դարձընեն զաշխարհ բոլոր անապատ,
Կը ծաւալեն սպիտակ գիշեր անփարատ .
Կ'եղէ կ'ասպատակէ հեռաւոր որջէն,
Ատամունքը սրբած անդու կը կորնչեն :
Վա՛յ է այն փարախին՝ ուր խաշնադարման
Քուն կ'ըլլայ խաղաղիկ իր գառանց նըման :
Վա՛յ է այսպէս ալ ձեզ՝ ազգեր խընդամիտ
Որ դեռ կը վայելէք արեւու ժրպիտ .
Որ սօթաշերմ գեանի վըրայ կը նընջէք,
Եւ գունեան ծիրանի ծաղիկ կը փընջէք,
Ոնկընդրելով պայծառ հընչմանց պըղընձի
Ձոր ճըպուռը կ'արձակեն բախմամբ թեւացի՝
Որպէս անլուռ հընչուն տաղ առ Կիւրեղէ :
Աստուածուհին քաղցրիկ ծոր կը ծաւալէ
Ձոր հըմուտ է քաղել ոսկեփայլ մեղուն :
Անոր խընամածու պարգեւով զեղուն
Պըտուկները մաքուր կ'երթան գեանաքարը :
Եւ զով այգեստանին խորն՝ ուր սարդը կարծ
Կը հիւսէ նըրբաբար, խաղող կապուտակ
Կը խոստանայ բաշխել ծիծաղ ու կատակ :
Գիշերն ալ կ'ընծայէ կախուղ հուլանի
Ուր սիրոյ խընկաւէտ շունչ կը ծածանի :
Ձեր կանայքը փափուկ, ոտք գեղեցիկ,
Կը քընքըն կը նային ակնարկութեամբ ձեզ,
Շըրթանցմէ կաթելով տարի անուշարար :
Նախանձալից տըրտում՝ Հիւսիսը թըշուառ
Կը շարակնէ նըստած անձայն բըքահեղձ,
Ոտքերը շորերով պատած ու տըխելծ,
Գըլխուն վըրայ ձեան գէզ, մէջքը կաշեայ կապ,
Աչուրները սառած, հոգին գունաթափ :
Դէմքը սէգ է, աղճատ թաւամաղ մօրուս
Որմէ կը թըռցընէ թելեր ծայրախուզ

Փոթորկալից քամին՝ կը խըղզէ զանի :
Քաղցէն կը մըրմընայ եւ կը դայրագնի,
Կը տեսնայ հեռաւոր արտեր ոսկեծուփ,
Ուր պըտողալից ծառ, ծաղկալից է թուփ :
Եւ պինդ գայլախազով կը սըրէ տապար :
Ահա խուճապական հեծած երիւար
Դըռոյթ տալ կը ջանայ եւ ամենայն ինչ
Կողոպտել, արձակել խընդութեան խըրխինջ :
Պողովատի նըման բըքերը շողուն
Ու խած կ'երեցընէ վըրագ ցանկութիւն :
Նախանձորը թըշնամի է ձիւնը գարնան :
Շատոնց թիւրքը մոնղոլ եւ հիւսիսական՝
Արեւելից սեւ ախտ, սակըր մըշտաքանդ,
Քարով ապականեց երկիրը մարմանդ :
Մոնղոլ Ռուսը կ'իջնայ սառն անապատէն .
Նենգութիւն եւ երկիւղ կը կարապետեն
Անոր մութ գորութեան, եւ վըրանացից
Կը վարսէ բընութիւնն ամէն քաղքի կից :
Եւ կը լըսես գոռոզ Տեւտոնը զըժնայ
Կընել կոփել անդու զըրահ երկաթեայ .
Եւ այս անգամ թերեւ մուրճը ձեռքը թոր
Պիտի գայ խորտակել զաշխարհ անանդոր

Այս է, Գերմանիա, իշխանդ Մեհիա,
Ձոր դեռ կը նըզովեն Եւրոպ, Ասիա,
Այս է զաւակըդ մեծ : Բայց օր մը պիտի գայ
Որ զըրոհըդ զանի պիտի չըսըգայ :
Անոր գերեզմանին առջին թերաբաց
Դու լացիր — բայց ի զուր արձակեցիր լաց :

Ո՛չ — դա եղեանագործ էր անողորմ :
Ոչինչ ունէր վըսեմ : Եթէ նաւատարմ,
Մարդախոշոշ բանակ պարգեւեց զա բեզ .
Եթէ իրբեւ վարսամ հիմա կը ծագես
Որ ետեւէն ազի կը թօթափէ վառ .
Եթէ ունիս հիմա բազում զօրաւար,
Եւ բազումն թընդանօթ՝ որոնց նիւսին յեց
Դու բարձըր կը խօսիս եւ ես ահընկէց՝
Ո՛րչափ իրօք նըւազ ունիս հիմայ փառք :
Քարշ տանիլ կը ջանաս հիմայ փողազարի :
Օգակաոոյց բախտի անիւ մեքենան
Ա՛լ միտքըս կը գերէ, եւ երկինքդ է ան :
Սակայն քեզմէ չէինք ա՛ս մենք ըուպտեր ,
Ըսպիտակ արի կոյս , այլ արուեստի սեր,
Թըշուառութեան համար գութ, վեհանձնութիւն .
Խաղաղ գաղափարաց զու աղանետուն
Պիտի կանգնես անշուշտ այն աշտարակաց
Կը կարձէինք կատարն՝ որոնցմէ գոռաց

Խիստ յաճախ պատերազմ. ազնիւ օրինակ
 Պիտի ըլլաւ ազգաց զեռ խուժ, զեռ վիրապ:
 Եթէ Պիզմարզ քու հօտըզ միազամուր
 Հաւաքելով միայն, ժողուելով բոլոր
 Առաջնորդած ըլլար լեհ ազատութեան՝
 Պիտի զըրուատէինք զանի յաւիտեան:
 Եթէ փըշած ըլլար հընչին ոքսափող
 Խորերն անտաններու՝ միութեան սարփող,
 Անբաւ ուրախութեամբ կը խայտայինք մենք:
 Բայց ազարտեց ըզբեզ. որոչայթ եւ նենդ
 Դաս տըւաւ կիրարկել եւ սըաել անջան:
 Համօրէն մարդկութեան եղաւ դաւաճան,
 Մեր մեռելոց եղաւ նախատիչ անարդ:
 Տարածեց ուսմբի ձայնն անունը Պիզմարզ:

Դու, իշխան, ծաղրեցիր ըզգացում եւ խանդ.
 Պէտք չունինք մեծարել մենք ալ զերեզմանդ:

Սեպտեմբեր 98, Բարիզ.

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ » Ը

« Հայաստանի բարեկամներ » ու տարեկան ժողովը տե-
 զի ունեցաւ Գարտիֆ, Անգլիա, սեպտեմբեր 23 ին եւ
 24 ին:

Ասիկա առիթ մը եղաւ մեզի համար՝ շափելու հայ-
 կական հարցին քաղաքական կարեւորութիւնը այսօր
 Անգլիոյ մէջ:

Անգլիական բոլոր լրագիրները հրատարակեցին սա-
 լուրը. — Սուլթանը, իմանալով որ այգպիսի ժողով մը
 պիտի գումարուի Անգլիոյ մէջ, Կ. Պոլսոյ անգլիական
 զեսպանատան միջոցաւ հասկնալ ուզած էր անոր նպա-
 տակը, եւ յայտարարած էր որ այգպիսի գումարումներ
 Հայերուն փնասակար ըլլալէ զատ ուրիշ արդիւնք չէին
 կրնար ունենալ, որովհետեւ մահմէտականներուն զայ-
 րոյթը պիտի զրդուէին նորէն անոնց դէմ: Անգլիական
 զեսպանատանը հաւաստեց սուլթանին թէ այդ գումար-
 ման նպատակը զուտ մարդասիրական է, եւ քաղաքական
 ո եւ է նշանակութիւն չունի: Սուլթանը սակայն, այս հա-
 ճոյակատար յայտարարութենէն չզոհանալով, հրամայեց
 երկու սղաքիր զրկել Լանտոնէն Գարտիֆ որպէս զի ներ-
 կայ գտնուին ժողովին եւ բառ առ բառ իրեն տեղեկագրեն
 ի՞նչ որ խօսուի ու որոշուի:

Լուրը մեկնութեան չի կարօտիր: Անգլիական բոլոր
 լրագիրներն ալ արդէն ո եւ է խորհրդածութիւն չըրին սուլ-
 թանին այդ ուղղակի եւ ժպիրհ միջամտութեան մասին:
 Անշուշտ լուսալոյն զիրքն էր որ բունեցին. անօգուտ պոռ-
 չըտուցներու եւ զայրոյթներու մամանակը անցած է: Բայց

մենք տիրութեամբ կը հաստատենք հայկական դատին
 այս նահանջը Անգլիոյ մէջ, եւ ամբողջ մամուլին ալ ա-
 սիկա ընդունիլը՝ առանց բողոքի:

Ժողովը զբաղեցաւ զլիաւորապէս Հայաստանի թըշ-
 ուառներուն ինպատ՝ Անգլիոյ մէջ սկսած նպատակ գոր-
 ծը շարունակելու հարցով: Հայաստանի մասին արուած
 տեղեկութիւնները նորութիւններ չեն պարունակեր մեզի
 համար: Բայց կ'արժէ գաղափար մը տալ արտասանուած
 երկու բանախօսութիւններու մասին որոնք շատ ուշադրու-
 թիւն գրաւեցին:

Ժողովին նախագահը, Պ. Ճէյմս Պրայս, յայտարա-
 րեց թէ իրենց նպատակը լոկ մարդասիրական է: Քաղա-
 զաքականութիւնը իրենց խորհրդակցութենէն զուրս թող-
 լու զլիաւոր պատճառը սա է որ եթէ իրենց կարծիքը լի-
 ուլի յայտնեն Արեւելեան հարցին վրայ, կրնան փնաս
 հասցնել ձի՛շգ անոնց որոնց կը փափաքին օգտակար ըլ-
 լալ: Արեւելքի մէջ մոխիրը զեռ տաք է, եւ կրնայ ըլլալ
 որ նորէն բռնկի: Ուստի իրենք պիտի զգուշանան ո եւ է
 բառ արտասանելէ որ կարենայ ծանրացնել Հայաստանի
 անպաշտպան ժողովրդին կացութիւնը: Ասով ըսել չէ թէ
 կը հրաժարին իրենց գործելու իրաւունքէն՝ երբոր գործե-
 լու ատենը դայ: Ինք կը հաւատայ իսկ թէ եթէ 1895ի
 եւ 1896ի տագնապին պէս տագնապ մը նորէն երեւան
 դայ, Անգլիա կամ եւրոպական միւս պետութիւնները ա-
 ռաջուան ետմուլ անտարբերութիւնը պիտի ցոյց չի տան,
 բայց ատենը տարբեր խնդիրներ են: Իրենց նպատակն է
 հիմա օգնել առտաղոյ թշուառներու, եւ ասիկա ինքնին
 բաւական մեծ գործ մըն է: Երեւելի ու ազգեցիկ Հայեր
 իրենց զիմելով՝ թախանձազին ինքրած են որ այս ժողո-
 վը լոկ մարդասիրական հանգամանք մը ունենայ, եւ այդ
 Հայերը իրենց ազգին ներկայ պէտքերը ըմբռնելու կարող
 մարդիկ են:

Գալով նպատակ գործին, Պ. Պրայս յայտնեց թէ մեծ
 արդիւնք ձեռք բերուած էր արդէն Հայաստանի մէջ, բայց
 զեռ շատ բան կայ ընկելք: Հայերը իրենք մեծապէս օգ-
 նած են իրենց թշուառներուն:

Պ. Հէրբիս, որ ջարդերէն յետոյ Հայաստան ճամբոր-
 դեց, ատենաբանութիւն մը ընելով յայտարարեց թէ հա-
 ւատքի եւ յոյսի նշանաւոր վերածնութիւն մը կայ Հայոց
 մէջ:

Ժողովին կարեւորագոյն ատենաբանութիւնը ըրաւ
 Բրոֆ. Բամսէ, նշանաւոր գիտնականը որ իր արեւելեան
 հնագիտական ուսումնասիրութիւններովը հանրածանօթ է:
 Յայտարարեց թէ ինք թիւրքերուն բարեկամ է: Իր տե-
 սած թիւրքերէն շատը բոլորովին զտրոված են ջարդերը,
 ոմանք մարդասիրական տեսակէտով, ուրիշներ խոհեմու-
 թենէ եւ խելացութենէ զրդուած, որովհետեւ գիտեն թէ
 թիւրք կայսրութիւնը քրիստոնեաներուն աշխատանքով է
 որ կանգուն մնացած է եւ կը մնայ: Խոստովանեցաւ թէ
 կատարելապէս սխալած էր երբ մէկ քանի տարի առաջ ը-
 սած էր թէ կարելի է Ռուսիոյ հետ ձեռք ձեռքի տալ խա-
 դադօրէն լուծելու համար Արեւելեան խնդիրը: Հիմակ ինք
 համոզուած է թէ Արեւելեան խնդրին մէջ Ռուսիոյ զերը

կամովին անիրաւ եւ չար եղած է: Մինչդեռ երկու տարի առաջ կը մտածէր թէ արեւելեան տագնապին մեղքը՝ ա՝ մէնէն աւելի Անգլիոյ վրայ կը ծանրանայ, այսօր կը մտածէ թէ այդ մեղքին ամբողջ բեռը Ռուսիոյ ուսերուն վրայ կը ծանրանայ: Անկարելի է չհամոզուիլ թէ Ռուս կայսրութիւնը գիտակցաբար սա նպատակին կը նկրտէր — **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ ՀԱՅ ՉՄՆԱՅ**: Հայերը դժուարաւ կառավարուելիք ժողովուրդ մըն են, եւ Ռուսիա, որուն ձեռքը պիտի անցնի հաւանորէն ամբողջ Հայաստանը, կամովին մեղսակից եղաւ Հայերուն ջարդին, որպէս զի Հայաստանը դրաւ առանձին կարելի եղածին չափ քիչ գանուի հոն այդ ըմբոստ տարրէն: Բրոֆ. Բամսէ ընդունեց թէ ասիկա շատ ծանր ամբաստանութիւն մըն էր, բայց կարելի չէր ուրիշ եղբակացութեան մը հասնիլ:

Այս բանախօսութիւնը խորին տպաւորութիւն առաջ բերաւ: Բրոֆ. Բամսէ յարեց նաեւ թէ Հայաստանի բարեկամները հիմա թիւրքերուն ճշմարիտ բարեկամներն են: Ինքնորէն Հայաստանի մը մտածումը վտանգաւոր եւ կործանարար երազ մըն է, որովհետեւ հայ ժողովուրդը տեղ մը հաւաքուած չէ, ու, նաեւ, կառավարելու յատկութիւններ չունի: Բրոֆ. Բամսէի կարծիքով, ինչորին լուսագոյն լուծումը պիտի ըլլայ թիւրքերուն եւ Հայերուն միացումը: Բայց ատկից առաջ, պէտք է որ խաղաղութիւնը տիրէ: Որչափ ասեմ որ ժողովրդին մէկ մասը մահուան վտանգի տակ է, անկարելի է որ միացում առաջ գայ:

Ժողովը հետեւեալ որոշումը քուէարկեց.

«Ժողովը կը յայտարարէ թէ որոշած է օգնել Հայերուն որչափ ասեմ որ հայ հասարակութիւնը արտաքին օժանդակութեան պէտք ունենայ, եւ կոչում կ'ընէ Անգլիոյ եւ Իրլանտայի բնակիչներուն, մասնաւորապէս այն քաղաքներուն ու վայրերուն ուր Հայոց նպաստամատոյց ընկերութիւն կազմուած չէ, աշակցիլ այն ջանքերուն որոնք ի դրո՛ք կը դրուին առաջ տանելու համար այս մարդասիրական գործը:»

Լ. Զ.

ՕՐՈՒՄԸ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մանրակշիռ լուրեր կուզան Հայաստանէն վերջին պահուն:

Սեպտեմբեր 29 թուականով, Բիւլէր կը հեռագրէ Կ. Պոլսէն.

«Վանէն եկած տեղեկութիւնները կ'իմացնեն թէ այսօրերս ծանր կոիւ մը տեղի ունեցեր է Ալաշկերտի դաւառակին մէջ, թիւրքերու եւ Ռուսիայէն եկած Հայերու խմբի մը միջեւ: Հայերէն 49 հոգի սպաննուեր եւ 3 հոգի վիրաւորուեր են:

«Թիւրքերուն ըսածին նայելով, Հայերը՝ վանի նահանգին վերաբերող յաղափոխականներ էին: Թիւրքերը կ'ըսեն թէ 15 հայ սպաննուեր են:»

Աւելի մանրամասն տեղեկութեանց կ'սպասենք՝ կարենալու համար սրտ գաղափար մը կազմել ծանուցուած

արիւնալի դէպքերուն վրայ: Դաշնակցականներն են նորէն որոնք այդպիսի անօգուտ արիւնահեղութիւններով կը ծանրացնեն մեր դժբաղդ հայրենիքին արդէն ողբալի կացութիւնը: Չենք գիտեր դեռ: Բայց եթէ այսպիսի դէպքերով է որ կ'ուզուի հայկական հարցը վերարծարծել, պէտք է զիսնալ որ անգլիական մամուլը եւ ոչ իսկ երկու տող կը նուիրէ առանց, ու միւս կողմէ կ'ամբաստնուի այն կարծիքին մէջ թէ առանց ամբողջ «Ռուսիոյ գործերն են»:

Ա՞ն է մեր փնտռածը. մեր հեղեղի պէս վազած արիւնը մեզի ուրիշ դիրք պէտք չէ՞ տայ Եւրոպայի առջեւ՝ քան թէ Ռուսիոյ ձեռքը խաղաղիք ըլլալու տխուր ու արհամարհելի գերը: Պէ՞տք է որ անգլիացի հիւպատոսէն յետոյ, ամբողջ հանրային կարծիքը ընդունի թէ «հայրենասէրներ չեն ատ մարդիկը»:

* * *

Ռուսիա արդէն կ'երեւայ որ այս միջոցիս նորէն մեզ մով կը զբաղի «մեր շահուն համար»: Այդ դէպքերէն հինգ օր առաջ Բեդրպուրկէն կը հեռագրէին «Տէյլի Թէլէկրաֆ»ի. «Կառավարական շրջանակներուն մէջ վախ կը յայտնուի թէ 18 ամսէ ի վեր կովկաս գոնուող Հայ գաղթականներուն վերահաստատումը թիւրքիոյ մէջ իրենց հողերուն վրայ՝ ծանր խռովութիւններու առիթ տայ Բիւրստերուն հետ որոնք այդ հողերը գրաւած են, եւ նորէն Հայ արիւնը թափի: Ռուսիա կ'աշխատի այսպիսի հետեւանքի մը առաջն առնել, եւ նոյն իսկ պատրաստ է այդ թուրքահայերը իբր գաղթական տեղաւորել նոյն իսկ Ռուսիոյ մէջ: Միեւնոյն ասեմ սակայն, ձարին կառավարութիւնը հրահանգ տուած է Կ. Պոլսոյ զեսպանին՝ ազդուօրէն իմացնել սուլթանին որ եթէ հայկական նոր ջարդ պատահի, Ռուսիա անտարբեր հանդիսատես պիտի չի մնայ եւ Դուռը պատասխանատու պիտի համարի այդ սփռներուն համար:»

Անհասկնալի կը մնայ սակայն թէ Ռուսիա, որ հայկական արիւնին համար այս վայրկեան այնքան հոգածու է, ինչո՞ւ թող կուտայ որ զինեալ Հայեր իր երկրէն թիւրքիա անցնին՝ հոն խռովութիւններ առաջ բերելու համար:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱՃՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեղին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15 ին: Բաժնեղինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: